ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

3 հոկտեմբերի 2019 թվականի N 1332-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի ֆինանսական գնահատականը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման համակարգի մարմինների հետ համատեղ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի պլանավորման ժամանակ քննարկել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով տվյալ տարվա համար նախանշված արդյունքների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու հարցը:

4. Հանձնարարել պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին և առաջարկել ինքնավար մարմինների և անկախ պետական մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ներկայացնել կիսամյակային հաշվետվություն սույն որոշմամբ հաստատված ծրագրում ներառված միջոցառումների ընթացքի մասին:

5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ սույն որոշման 4-րդ կետով սահմանված հաշվետվությունները ստանալուց հետո ապահովել դրանց հրապարակումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կայքէջում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ Ն. Փաշինյան**

2019 թ. հոկտեմբերի 4
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2019 թվականի հոկտեմբերի 3-ի
N 1332-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2019 թ.

**Բովանդակություն**

Ներածություն
ԳԼՈՒԽ 1. Հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակի վերլուծություն
1.1. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի գնահատումը
1.2. Ընթացիկ իրավիճակի գնահատումը և կոռուպցիայի ընկալումը հասարակության շրջանում
1.3. Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները և գնահատումները
ԳԼՈՒԽ 2. Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը և խնդիրները
2.1. Հակակոռուպցիոն ռազմավարության հետապնդած առանցքային նպատակները և առաջադրված հիմնական խնդիրները
ԳԼՈՒԽ 3. Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը
ԳԼՈՒԽ 4. Հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները
4.1. Կոռուպցիայի կանխարգելում
4.2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում
4.3. Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում
ԳԼՈՒԽ 5. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի իրականացման համակարգումը, մշտադիտարկումը, հսկողությունն ու դրա վերաբերյալ հանրային հաղորդակցությունը
ԳԼՈՒԽ 6. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով պայմանավորված ծախսերի վերլուծություն ֆինանսական գնահատականը
6.1. Մեթոդական նկատառումներ Դոնոր կառույցների մասնակցություն և օժանդակություն

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Դեպի իրական ժողովրդավարություն իր աներկբա ու գիտակից ընտրությունը կատարած հայ ժողովուրդը չունի կայուն զարգացման այլընտրանք, քան կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողականության և անընդունելիության չբեկվող մթնոլորտի ու վերաբերմունքի ձևավորումը: Բացառապես հիշյալ գաղափարի խորը արմատավորման դեպքում է հնարավոր և իրական նյութականացնել ժողովրդավարություն վայելող իշխանություններից ակնկալվող հանրային օբյեկտիվ սպասումներն ու հույսերը: Այս համատեքստում ավելորդ չէ մեկ անգամ ևս արձանագրել, որ միջազգային և ներպետական մակարդակներում պետությունները բազմիցս վերահաստատել են կոռուպցիայի վտանգավորությունը և անդառնալի ազդեցությունը իրավունքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, տնտեսության զարգացման վրա: Հաշվի առնելով կոռուպցիայի աշխարհագրական ընդլայնվածությունը, կոռուպցիոն դրսևորումների բազմազանությունը և դրա դեմ անզիջում պայքարի օբյեկտիվ հրատապությունը՝ պետություններն իրենց

պատրաստակամությունն են հայտնել կոռուպցիայի դեմ պայքարում ջանքերը մեկտեղելու թե՛ ներպետական, թե՛ միջազգային հարթակներում կոռուպցիոն սխեմաները բացահայտելու և կոռուպցիայի նկատմամբ համակարգված պայքարելու հարցում:

2. Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը նույնպես անմասն չի մնացել վերոնշյալ զարգացումներից և գործընթացներից: Նախորդ տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետության Կառավարությունը հրապարակային ելույթներում և միջազգային ձևաչափերում շարունակաբար հայտարարել է կոռուպցիայի դեմ հետևողական պայքար մղելու նպատակադրման մասին: Բայց և այնպես, նշված նպատակադրումը չի ունեցել իրական քաղաքական կամք և չի ուղեկցվել հակակոռուպցիոն քաղաքականության իրական խնդիրների հայտնաբերման, թիրախավորման և դրանց համակարգային ու հիմնարար լուծմանն առնչվող կոնկրետ գործնական քայլերով: Հարկ է փաստել, որ չնայած այն իրողությանը, որ Հայաստանի Հանրապետությունն ունեցել է հակակոռուպցիոն երեք ռազմավարություն՝ համապատասխան միջոցառումների ծրագրերով, կոռուպցիայից բխող անբարենպաստ հետևանքներն իրենց բոլոր դրսևորումներով հանդերձ, դեռևս շարունակում են աննահանջ տեղ զբաղեցնել հասարակական կյանքի բազմազան ոլորտներում: Դրա մասին են վկայում ինչպես նախընթաց տարիներին կոռուպցիայի գործող մակարդակի վերաբերյալ առկա հանրային ընկալումն ու տրամադրությունները, այնպես էլ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ամենատարբեր գնահատական-զեկույցները, ցուցանիշները:

3. Այսպես, օրինակ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի (2014-2018թթ.) մոնիթորինգի 4-րդ փուլի զեկույցով նշվում է, որ չնայած ոլորտում իրականացված փոփոխություններին, կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանը չի գրանցում շոշափելի և տեսանելի հաջողություն քաղաքական կամքի դրսևորման բացակայության պատճառով: Ասվածին գումարվում է նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման համաթվի ցուցանիշը, որն ուղղակիորեն փաստում է Հայաստանում կոռուպցիայի համակարգային բնույթը:

4. Վերոնշյալը, ի թիվս այլ առարկայական հանգամանքների, հիմք դարձավ քաղաքացիների աննախադեպ, պատմական և ժողովրդական ընդվզման: Տարիներ ի վեր իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կուտակված հիմնարար խնդիրները, ժողովրդավարական ինստիտուտների զարգացման անբավարար մակարդակն ու իհարկե, կոռուպցիայի դեմ իրական պայքարի բացակայությունն էին հենց, որ դարձան 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության պատճառ: Ժողովուրդը դուրս եկավ փողոց՝ գործնականում իրականացնելու ավելի լավ երկիր ունենալու իր երազանքը: Ժողովուրդն իր ձայնը բարձրացրեց իրավունքի գերակայությամբ, մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներով ապահովված և կոռուպցիայից զերծ երկիր ունենալու աներեր պահանջով, իսկ ժողովրդական հեղափոխության հաղթանակի արդյունքում ձևավորված իշխանությունը ստանձնեց հիշյալ կամքի իրացման պատասխանատու հանձնառությունը: Բնական է, որ հիշյալ հանձնառության իրացումը ենթադրում է կոռուպցիայի դեմ պայքարը որպես գերակա ուղղություն հռչակելու հաստատապես ձևակերպված կամք և վճռականություն, ինչի սկիզբն արդեն իսկ դրվել է 2019 թվականի փետրվարի 14-ի «ՀՀ Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ԱԺՈ-002-Ն որոշմամբ և քաղաքական

ամենաբարձր մակարդակով գործնականում ձեռնարկված համակարգային կոռուպցիան վերացնելու հստակ գործողություններով:

5. ՀՀ Կառավարության ծրագրում որպես ՀՀ Կառավարության գործունեության հիմնարար ուղենիշներ սահմանվեցին կոռուպցիայի դեմ առավել թիրախավորված և արմատական պայքար մղելը, կոռուպցիայի հանրային մերժումը և կոռուպցիայից զերծ հանրության առկայությունը: Ընդ որում, նախատեսվեցին նաև մի շարք հիմնարար, հայեցակարգային պահանջներ, որոնք արդեն իսկ ենթադրում են դրանց շրջանակներում առավել կոնկրետ և հասցեական միջոցառումների իրականացում: Մասնավորապես, Կառավարության ծրագրով հստակ ընդգծվեց կոռուպցիայի կործանարար ազդեցությունը և նշվեց, որ Կառավարությունը կոռուպցիայի նկատմամբ լինելու է վճռական, հաստատակամ, անզիջում և անհանդուրժող: Կառավարության ծրագրով առանձնահատուկ կարևորվեց կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացմանը միտված գործողությունների կատարումը: ՀՀ Կառավարության ծրագրում հատուկ ընդգծվեց նաև կոռուպցիայի նկատմամբ վճռական, հաստատակամ, անզիջում պայքարի և կոռուպցիայից զերծ հանրություն ձևավորելու կարևորությունը:

6. Կառավարության ծրագրի տրամաբանական շարունակությունը և իրացման կենսաձևն, անշուշտ, պետք է համարել Հայաստանի Հանրապետության նոր հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումը, որով Հայաստանի Հանրապետության Կառավարության որդեգրած քաղաքականությանը համահունչ կնախանշվեն կոռուպցիայի դեմ իրական պայքարի հիմնական ուղղություններն ու ակնկալվող արդյունքները: Անհրաժեշտ է ընդգծել նաև այն, որ այս համատեքստում կարևոր նշանակություն է ձեռք բերում Հայաստանի Հանրապետության նոր հակակոռուպցիոն ռազմավարության՝ արդի մարտահրավերներից բխելու և դրանց հետ համապատասխանությունն ապահովելու հանգամանքը և, ըստ այդմ, ճշգրիտ թիրախների առանձնացմամբ առկա խնդիրների շուտափույթ լուծումը:

7. Ռազմավարության իրականացման հիմնական երաշխիքներից մեկն է լինելու նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից դրսևորած քաղաքական աննախադեպ կամքն ու վճռականությունը: Վերջինիս դրսևորմամբ անհրաժեշտ է ձեռնամուխ լինել կոռուպցիան ծնող ու դրա տարածումը խթանող պատճառների ու պայմանների վերացմանը, որն էլ իր հերթին կհանգեցնի կոռուպցիայի աստիճանական հաղթահարմանը: Իհարկե, քաղաքական կամքի առկայությունը կենսականորեն անհրաժեշտ, բայց միակ բավարար գործոնը և պայմանը չէ հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրագործման համար: Այս առումով ակնհայտորեն պետք է մեկտեղվեն Կառավարություն-քաղաքացիական հասարակություն-քաղաքացի համատեղ ջանքերը՝ ուղղված միասնական նպատակի կենսագործմանը: Նույնչափ կարևոր է նաև հանրային լայն աջակցության և իրավական մշակույթի շարունակական ձևավորման ուղղությամբ ակտիվ քայլերի ու ինստիտուցիոնալ գործիքների ներդրումը, որի համակարգում էական դերակատարում կարող է ունենալ հակակոռուպցիոն կրթությունը: Այս ամենի արդյունքում որպես հակակոռուպցիոն ռազմավարության նպատակ՝ անհրաժեշտաբար պետք է սահմանել նաև ՀՀ-ում կոռուպցիայի դեմ անհանդուրժողականության և անընդունելիության կայուն հասարակական վերաբերմունքի ձևավորումը՝ որպես կոռուպցիան արմատախիլ անելու ինստիտուցիոնալ գործիք:

8. Այս տեսակետից հատկանշական է, որ Ռազմավարությունն, ի թիվս այլ նպատակների, ուղղված է լինելու հանրային կառավարման համակարգում բարեվարքության, թափանցիկության, մասնակցայնության արդյունավետ և իրագործելի կառուցակարգերի ստեղծմանն ու կատարելագործմանը, պետական համակարգում

կոռուպցիայի հակազդմանն ուղղված միասնական կանոնների թելադրմանը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելի ներդրմանը:

9. Ներառական ռազմավարություն ունենալու անհրաժեշտությունից ելնելով՝ Ռազմավարությունը հատուկ կարևորում է հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման գործընթացին քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը և հանրային վերահսկողության անհրաժեշտությունը:

10. Ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի ֆինանսական կայունությունը երաշխավորվում է Ռազմավարության նպատակներից բխող միջոցառումների ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցների տրամադրման միջոցով: Հակակոռուպցիոն գործընթացում համագործակցության ամրապնդման տեսանկյունից կարևորվում է նաև գործընկերների, այդ թվում՝ միջազգային, տարածաշրջանային և հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցությունը: Ռազմավարության կատարումն ապահովող ֆինանսավորումն ակնկալվում է այնպիսի աղբյուրներից, ինչպիսիք են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսավորումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

## ԳԼՈՒԽ 1.
## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 1.1. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի գնահատումը

i

11. Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ նաև ՀՀ) հակակոռուպցիոն նոր ռազմավարության առաջնայնություններն ու խնդիրները նախանշելու, ՀՀ հակակոռուպցիոն մարմինների նոր ինստիտուցիոնալ համակարգ ներդնելու ուղղությունները որոշակիացնելու, ինչպես նաև հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ Կառավարության ծրագրային քաղաքականության կենսագործման նպատակների իրականացման համար էականորեն կարևորվում է ՀՀ Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատումը: Նման գնահատման կարևորությունն ընդգծվում է նաև այն տեսանկյունից, որ այն հնարավորություն է տալիս համարժեքորեն գնահատել նախկին ռազմավարությամբ ձեռք բերված արդյունքները, թույլ տրված բացթողումները և լավագույն փորձի հաշվառմամբ ուրվագծել նախանշվող միջոցառումների ցանկը:

12. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի 24-րդ կետն ուղղակիորեն ազդարարում էր, որ հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներն իրագործելու միջոցով Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հետևողական նվազեցմանը նպաստելն է (...): Այսուհանդերձ, ռազմավարության նպատակի իրագործման կարևորագույն երաշխիքը քաղաքական կամքն է, ինչի բացակայության պայմաններում էլ խնդիր-նպատակները համարժեքորեն չհաջողեցին:

13. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի թերություններից մեկը դրա ընթացիկ մոնիթորինգի

կառուցակարգի բացակայությունն է: Վերջինիս գործողության 4 տարիների ընթացքում թեև պատասխանատու պետական մարմինները պարբերաբար ներկայացրել են հաշվետվություններ իրենց իրականացված հակակոռուպցիոն միջոցառումների վերաբերյալ, սակայն հստակ ցուցիչների բացակայության պայմաններում այդ հաշվետվությունների համապարփակ ուսումնասիրություն և միջոցառումների իրականացման մակարդակի պարբերական գնահատում հնարավոր չի եղել ապահովել: Բնական է, որ նշված բովանդակային գնահատման գործիքների բացակայությունը հանգեցրել է ռազմավարությամբ ընդգրկվող միջոցառումների մի զգալի հատվածի ոչ պատշաճ կամ ձևականորեն կատարմանը:

14. Ասվածին գումարվում է այն, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների արդյունքների վերաբերյալ վերլուծություններ ևս չեն իրականացվել՝ պարզելու համար միջոցառումների ծրագրում ներառված այս կամ այն միջոցառման դրական կամ բացասական ազդեցության աստիճանը, արդյունավետության մակարդակը: Ընթացիկ միջոցառումների արդյունավետությունը բացահայտող նման գործիքների բացակայությունը հակակոռուպցիոն ռազմավարության իրացման ամբողջ գործընթացը դարձնում էր խիստ ձևական՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

15. Պետք է շեշտադրել նաև այն, որ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների շրջանակներում համարժեքորեն որոշված չէր հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ մարմինների համակարգը, սահմանված չէր հատկապես կոռուպցիայի դեմ պայքարի հարցում որոշակի մասնագիտացված մարմնի առկայության պարտադիր պահանջ, որի հետևանքով կոռուպցիայի դեմ պետության կողմից վարվող քաղաքականությունն իրականում տարրալուծվում էր բազմաթիվ պետական մարմինների գործառութային իրավասության զանազան տիրույթներում՝ կորցնելով համակարգայնության և միասնականության հատկանիշները: Սա իր հերթին հանգեցնում էր կոռուպցիայի դեմ ոչ արդյունավետ պայքար մղելուն: Բացի այդ, նման տարբերակման պայմաններում օբյեկտիվորեն չէր ապահովվում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների միատեսակ չափորոշիչներով քննության իրականացման պահանջը՝ խաթարելով նաև քննչական պրակտիկայի միասնականությունը:
i

16. Բացի այդ, ՀՀ Կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165-Ն որոշմամբ ստեղծված Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի արձանագրած արդյունքները հիմնականում առաջընթաց ապահովեցին օրենսդրական բնագավառում՝ էական արդյունք չգրանցելով գործնականում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման և համակարգման, կոռուպցիայի առաջացման ու տարածման պատճառները վերացնելու տեսանկյունից:

17. Ասվածին գումարվում է նաև այն, որ վերը նշված ռազմավարության մեջ ներառված բոլոր միջոցառումները չէ, որ իրենց ձևակերպմամբ ու բովանդակությամբ համապատասխանում էին խնդիր-լուծում-ակնկալվող արդյունք եռամիասնականության շղթայի էությանը:

18. Բացթողումների ու թերությունների շարքը, կարելի է շարունակել: Բայց և այնպես, անհրաժեշտ է արձանագրել և ի գիտություն ընդունել նաև վերը նշված ռազմավարության դրական կողմերը: Դրական կողմերի մասին փաստեր արձանագրելուց առաջ պետք է անպայմանորեն նկատել, որ դրանք գերազանցապես վերաբերում են օրենսդրական փոփոխությունների տիրույթին, որպիսիք էականորեն չեն ազդել հանրության շրջանում առկա այն գաղափարի արմատավորմանը, որ պետությունը համակարգային ու հետևողական պայքար է մղում կոռուպցիայի դեմ:

Պետության կողմից կոռուպցիայի դեմ համակարգային ու հետևողական պայքար մղելու գաղափարի հանրային արմատավորման բացակայությունից զատ հստակ և տեսանելի չէին կոռուպցիայի դեմ պայքարի իրատեսական միջոցառումներ ձեռնարկելու քայլերը, ինչը հանգեցրել էր կոռուպցիայի դեմ պայքարի երևութական լինելուն: Սա հատկապես վառ է արտահայտվում ոլորտին վերաբերելի իրավական ակտեր ընդունելու համատեքստում, որոնք արտաքուստ ստեղծում էին կոռուպցիայի դեմ պայքար մղելու պատրանք, սակայն տևական ժամանակահատվածի ընթացքում իրավական նորմերով սահմանված պարտադիր պահանջները այդպես էլ իրենց պրակտիկ կիրառություն չստացան:

19. Նախորդ ռազմավարության արդյունքների մասին խոսելիս, որպես դրական քայլեր անհրաժեշտ է առանձնացնել ստորև նշվածները՝

1) 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն Հայաստանում նախատեսվում էր ստեղծել անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին:
i

2) 2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքը, որով ամբողջությամբ վերանայվել է հանրային ծառայության համակարգը, բարեփոխվել են կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն տարրեր հանդիսացող հայտարարագրման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, բարեվարքության կառուցակարգերը:
i

3) 2018 թվականի մարտի 23-ին ընդունվել է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը, որի պահանջների գործնական իրացման արդյունքում քաղաքացիական ծառայության համակարգը կդառնա առավել արժանիքահեն և մրցունակ:
i

4) Նորմատիվ իրավական ակտի նախագծերի իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, այդ գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով 2016 թվականի սեպտեմբերի 2-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Կառավարության 1134-Ն որոշումը (ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ), որով ստեղծվել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք: Միաժամանակ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համահունչ՝ ՀՀ Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1146-Ն որոշմամբ սահմանվել է հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման նոր կարգը՝ հիմքում ունենալով հրապարակայնության, մատչելիության, թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքները:

5) Պետական կառավարման համակարգի թափանցիկության ապահովման, վարչարարության պարզեցման նպատակով ներդրվել են կամ ներդրման փուլում են էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) մի շարք առանձին գործիքներ (օրինակ՝ e-request.am, e-hotline.am, e-license.am և այլն):

6) 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների փաթեթը, որի արդյունքում քրեականացվել է ապօրինի հարստացումը և սահմանվել է քննչական ենթակայությունը:

7) 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներով քրեական և վարչական պատասխանատվություն է սահմանվել, համապատասխանաբար, հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու, հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու, և հայտարարագրերը սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

8) 2017 թվականի հունիսի 9-ին ընդունվել է «Ազդարարման համակարգի մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: Օրենսդրական փաթեթի շրջանակներում սահմանվել են ազդարարների պաշտպանության երաշխիքների, ինչպես նաև գործուն կառուցակարգերի ներդրման դրույթներ (անանուն հաղորդում ներկայացնելու մեխանիզմ)՝ նպատակ հետապնդելով նպաստել հանրության մեջ կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը, կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը, կոռուպցիոն դեպքեր բացահայտող մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

9) Միևնույն ժամանակ, վերը նշված օրենքի կենսագործումն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ Կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն և 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշումներով համապատասխանաբար հաստատվել են «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը» և «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը»:

### 1.2. Ընթացիկ իրավիճակի գնահատումը և կոռուպցիայի ընկալումը հասարակության շրջանում

20. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման չորրորդ փուլը համընկել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ[1]) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի 4-րդ փուլի գնահատման ժամանակահատվածի հետ:

[1] ՏՀԶԿ-ն իրականացնում է երկրներում կատարվելիք հակակոռուպցիոն գործընթացների և առկա իրավիճակի ընդհանրական, համապարփակ և պարբերական գնահատում

21. Այս առումով, հարկ է նշել, որ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի 4-րդ փուլի գնահատման «Հայաստանի վերաբերյալ» 2018

թվականի զեկույցում (այսուհետ՝ Զեկույց)[2] արձանագրվել են մի շարք նկատառումներ, որոնց սույն Ռազմավարության շրջանակներում անհրաժեշտ է անդրադարձ կատարել՝ ընթացիկ իրավիճակի վերաբերյալ առավել խորքային պատկերացում կազմելու նպատակով:

[2] https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf

22. Այսպես, Զեկույցում նշվում է, որ վերջին չորս տարվա ընթացքում Հայաստանը բարեփոխել է իր հակակոռուպցիոն օրենսդրությունն ու ինստիտուտները, սակայն համատարած կոռուպցիայի հաղթահարմանն առնչվող իրական լուծում դեռևս առկա չէ:

23. Զեկույցում ընդգծվում է, որ Հայաստանն ընդունել է քաղաքացիական ծառայության և քաղաքացիական ծառայության բարեվարքության համապարփակ իրավական շրջանակ, այդ թվում՝ էթիկայի և շահերի բախման հարցերին առնչվող իրավական կարգավորումներ, քրեականացրել է ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը և ապօրինի հարստացումը, նախաձեռնել է ազդարարների պաշտպանության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքները, լրամշակվել են գույքի հայտարարագրմանն ու պետական գնումներին առնչվող իրավական կարգավորումները: Հայաստանը նաև ներդրել է էլեկտրոնային կառավարման տարբեր գործիքներ ու ծառայություններ, գույքի հայտարարագրերի հրապարակման և ստուգման, ինչպես նաև ընդլայնված էլեկտրոնային գնումների համակարգ: Գործարար միջավայրում իրականացված որոշ բարելավումներ և մանր կոռուպցիայի ընկալելի մակարդակի աննշան նվազեցումը հնարավոր է եղել ապահովել կանոնակարգերի պարզեցման և էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրման արդյունքում:

24. Զեկույցում նաև անդրադարձ է կատարվել այն հանգամանքին, որ վերոնշյալ քայլերը, այդուհանդերձ, միայն սահմանափակ ազդեցություն են ունեցել, և կոռուպցիան շարունակում է էական խնդիր մնալ պետական կառավարման այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են՝ դատական իշխանությունը, հարկային և մաքսային, առողջապահական, կրթական, ռազմական ոլորտները և իրավապահ համակարգը:

25. Զեկույցով նաև նշվում է, որ մենաշնորհային տնտեսության և պետական պաշտոնատար անձանց շրջանում համատարած շահերի բախման համատեքստում հակակոռուպցիոն օրենքների գործնական իրավակիրառության բացը շարունակում է լուրջ մտահոգության առարկա մնալ:

26. Երկրում իրադրության փոփոխության լույսի ներքո ընթացիկ իրավիճակի գնահատման առումով՝ Զեկույցում մատնանշվել է, որ վերջին հեղափոխությունը ժողովրդավարության հարցում փոփոխությունների մեծ հույս է տվել, և վստահության մթնոլորտ ձևավորել նոր իշխանության նկատմամբ՝ լայն թափ հաղորդելով փոփոխություններին:

27. Զեկույցով ՏՀԶԿ-ն Հայաստանին հորդորում է ձեռնարկել հստակ միջոցներ՝ ՀՀ Կառավարությունում և ՀՀ Ազգային ժողովում գոյություն ունեցող շահերի բախման դեմ, ապահովել դատական և դատախազության համակարգերի անկախությունն ու բարեվարքությունը, և ավելի շատ ջանքեր գործադրել՝ հասարակական լայն արձագանք ստացած կոռուպցիոն դեպքերը բացահայտելու, դրանք քննելու և այդ գործերով հետապնդում իրականացնելու ուղղությամբ՝ կիրառելով տեղեկատվական և վերլուծական գործիքների տարբեր աղբյուրներ:

28. Խոսելով ընթացիկ իրավիճակի վերաբերյալ միջազգային կազմակերպությունների արձագանքների մասին՝ հարկ է արձանագրել, որ Եվրոպայի

խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի «այսուհետ՝ ԳՐԵԿՈ» «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների, դատախազների շրջանում» գնահատման 4-րդ փուլի՝ ՀՀ կողմից պարտավորությունների կատարման վերաբերյալ 2017 թվականի զեկույցը «այսուհետ՝ ԳՐԵԿՈ զեկույց[3]» նույնպես անդրադարձ է կատարել գնահատման ենթակա ոլորտներում առկա իրավիճակին, այդ թվում՝ պետության ձեռնարկած քայլերին և բացթողումներին:

[3] https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680775f12

29. Այսպես, պատգամավորների առնչությամբ ԳՐԵԿՈ-ն նշել է, որ Խորհրդարանում օրենսդրական գործընթացի թափանցիկության և անհամատեղելիության վերաբերյալ չափանիշներ կիրառելու միջոցների մասով Հայաստանը գրանցել է առաջընթաց: Այդուհանդերձ, անհրաժեշտ է ձեռնարկել հետագա քայլեր՝ ուղղված պատգամավորների համար վարքագծի կանոնագրքի մշակմանը, էթիկայի նորմերին և չափանիշներին պատգամավորների համապատասխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար նախատեսված մեխանիզմները ամրապնդելուն:

30. Դատավորներին անդրադառնալով՝ ԳՐԵԿՈ-ն ողջունել է սահմանադրական փոփոխությունների իրականացումը և արձանագրել, որ, Բարձրագույն դատական խորհրդի ստեղծմամբ բարեփոխվել է դատական իշխանության ինքնակառավարման համակարգը: Ավելին, դատավորների անձեռնմխելիությունը սահմանափակվել է «գործառույթների իրականացման հետ կապված անձեռնմխելիությամբ»: Դատավորների պաշտոնների համալրման, առաջխաղացման և պաշտոնից ազատման և դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու ընթացակարգերի մասով գրանցվել է որոշակի առաջընթաց: Այդուհանդերձ, ԳՐԵԿՈ-ն առաջարկել է քայլեր ձեռնարկել դատավորների մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության, դատավորների գործունեության անհարկի միջամտությունը բացառող արդյունավետ կանոնների սահմանման, ինչպես նաև դատավորների վրա ներգործելու կամ նրանց նկատմամբ հաշվեհարդար իրականացնելու նպատակով կարգապահական վարույթ հարուցելը կանխելու մասով երաշխիքներ ապահովելու ուղղությամբ:

31. Դատախազների առնչությամբ ԳՐԵԿՈ-ն ողջունել է «Դատախազության մասին» օրենքի ընդունումը՝ միաժամանակ նշելով, որ կարևոր քայլեր են ձեռնարկվել դատախազների համալրման ընթացակարգերը և դատախազների էթիկայի հանձնաժողովի աշխատանքը բարելավելու նպատակով: ԳՐԵԿՈ-ն զեկույցով առաջարկվել է առավել մեծ թվով միջոցառումներ իրականացնել՝ պարտադիր մասնագիտական վերապատրաստման և գաղտնի խորհրդատվության տրամադրման համակարգ ներմուծելու ուղղությամբ:

32. Կոռուպցիայի իրավիճակային վերլուծությունների առումով կարևորվում է նաև սոցիալական հարցումների միջոցով քաղաքացիների կարծիքների հավաքագրումը կոռուպցիայի ընկալման, ոլորտում իրականացված միջոցառումների արդյունավետության և ազդեցության, հետհեղափոխական ինստիտուտների գործունեության վերաբերյալ: Ասվածի կարևորությունը փաստվում է այն իրողության հաշվառմամբ, որ ցանկացած բարեփոխման հաջողությունը վերջին հաշվով անհատն է, ում ընկալումն իրականացվող գործընթացների վերաբերյալ ունի անկյունաքարային նշանակություն:

33. Կոռուպցիայի ընկալման մասին խոսելիս նախևառաջ պետք է վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի գրանցած արդյունքները

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի Կոռուպցիայի ընկալման համաթվի փոփոխության առումով: Այսպես, քննարկվող ժամանակահատվածում համաթվի հաշվարկման համար անհրաժեշտ միավորը գրեթե եղել է կայուն՝ տատանվելով 33-35 միավորների միջև: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ կոռուպցիայի ընկալման մակարդակը երկրում բավականին բարձր է:

34. 2019 թվականի հունվարի 29-ին հրապարակված «Թրանսփարենսի Ինթերնեշնլ»-ի Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) 2018 թվականի արդյունքներով[4] արձանագրվեց, որ Հայաստանի միավորը 2017 թվականի համեմատությամբ չի փոփոխվել[5](35):

[4] https://www.transparency.org/cpi2018

[5] Հայաստանի ԿԸՀ-ի միավորը կազմվում է 6 միջազգային կազմակերպությունների հետազոտությունների տվյալների համադրության արդյունքում, և դրանցից 5-ը կատարվել են մինչև 2018թ թավշյա հեղափոխությունը, ինչն ինքնին ազդեցություն է ունեցել արդյունքի վրա:

Միաժամանակ, ԹԻ-ը հատուկ անդրադարձ է կատարել այն հանգամանքին, որ տարածաշրջանային երկրների քաղաքական ընդհանուր պատկերի համատեքստում միայն Հայաստանում է նկատվում դրական միտում՝ նոր Կառավարության ձևավորման լույսի ներքո: Այնուամենայնիվ, չնայած կոռուպցիայի բարձր ընկալմանը՝ հետազոտությունները վկայում են, որ սակավաթիվ քաղաքացիներ են կոռուպցիայի բախվելիս պատրաստ այդ մասին ազդարարել: Օրինակ, Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի շրջանակներում կատարված հարցման արդյունքները վկայում են, որ Հայաստանի քաղաքացիները հակված չեն ազդարարել կոռուպցիոն բնույթի դեպքերի մասին[6]:

[6] https://www.transparency.org/research/gcb/overview

35. Այս հանգամանքը հաստատվել է նաև ազդարարման համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման արշավի ընթացքում իրականացված հարցման արդյունքներով: Մասնավորապես, հետազոտությանը մասնակցածների 88.5%-ը պատասխանել է, որ տեղյակ չէ ազդարարման ինստիտուտի մասին, 57%-ը դրական է վերաբերվում կոռուպցիայի մասին ազդարարելուն, եթե այդ մասին այլ մարդիկ ազդարարեն, 25%-ը առհասարակ նման քայլի չի գնա՝ մտածելով, որ շրջապատում իրեն չեն հասկանա, իսկ հարցվածների 7%-ը չի ազդարարի՝ համարելով, որ դրանից ոչ մի բան չի փոխվի, 1.5% տոկոսն էլ նման է քայլն իր սկզբունքներին դեմ է համարում և միայն 9%-ն է պատրաստ ինքն ազդարարել նման դեպքի մասին:

36. Հետազոտության նման արդյունքները փաստում են հանրության՝ կոռուպցիայի դեմ պայքարում իր մասնակցության կարևորությունը ամբողջական ծավալով չգիտակցելը: Ուստի, սույն Ռազմավարության ընդհանրական թիրախը պետք է լինի այս առումով քաղաքացիների իրավագիտակցության հետևողական բարձրացումը և վերջիններիս հակակոռուպցիոն պայքարի պահանջատեր դարձնելը:

37. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի մասին ամենամյա իրականացվող հարցումների արդյունքում մշակվող կովկասյան բարոմետրի 2017 թվականի Հայաստանյան հարցման արդյունքները ցույց են տալիս, որ 2017 թվականին Հայաստանում հարցվածների միայն 5 տոկոսն է անվերապահորեն հավատում գործադիր իշխանությանը, մինչդեռ 36 տոկոսը բացարձակապես չի վստահում վերջինիս: Թեև այս ցուցանիշները բարձր են 2015 թվականին արձանագրված ցուցանիշների

համեմատ (2 տոկոս բացարձակ վստահություն և 45 տոկոս բացարձակ անվստահություն), այնուամենայնիվ, զգալիորեն զիջում են հարևան Վրաստանում արձանագրված ցուցանիշներին: Այնուամենայնիվ, Կովկասյան բարոմետրի՝ 2019 թվականի վերաբերյալ տվյալները դեռևս առկա չեն, ուստի հետհեղափոխական կառավարության նկատմամբ հանրային վստահության մակարդակը նախկին մակարդակի հետ համեմատելու հնարավորություն այս առումով գործնականում առկա չէ:

38. «Ֆրիդոմ հաուս»-ի «Անցումային երկրներ» հետազոտության վերջին ցուցանիշը, որը հրապարակվել է 2018 թվականին, Հայաստանը համարում է մասամբ ազատ երկիր: Հետազոտությամբ Հայաստանի համաթիվը 5.43 է. Ընդ որում՝ համաթվում 7 միավորը տրվում է նվազ ժողովրդավար և 1 միավորը՝ առավել ժողովրդավար պետություններին: Հայաստանում 2018 թվականին կոռուպցիայի մակարդակը խորհրդանշող միավորը 5.5 է:

39. Համաշխարհային բանկի՝ Համաշխարհային կառավարման ցուցիչների 6-րդ՝ «Կոռուպցիայի վերահսկում» ենթացուցիչում Հայաստանի դիրքը 32.69 է՝ 100-ից:

40. Իրավիճակի վերլուծության առումով առավել համապարփակ պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել նաև քաղաքացիների հետհեղափոխական ընկալումները:

41. Այսպես, Միջազգային հանրապետական ինստիտուտի ծրագրի շրջանակներում 2018 թվականի հուլիսի 23-ից օգոստոսի 15-ը[7] և հոկտեմբերի 9-ից 29-ն ընկած ժամանակահատվածում իրականացված հարցումների[8] արդյունքները վկայում են այն մասին, որ հարցվածները երկրում ժողովրդավարության վերջնական հաստատումը հիմնականում պայմանավորում են կոռուպցիայի վերացումով:

---

[7] https://www.iri.org/sites/default/files/2018.10.9_armenia_poll_presentation.pdf

[8] https://www.iri.org/sites/default/files/2018.11.23_armenia_poll.pdf

Կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու տեսանկյունից հարցման մասնակիցները կարևորել են անպատժելիության բացառումը, գողացված ակտիվների վերադարձը և դրանց նպատակային օգտագործումը:

42. Նույն ծրագրի շրջանակներում 2019 թվականի մայիսի 6-31-ը[9] անց են կացվել հարցումներ պետական մարմինների գործունեության կոռուպցիայի կանխարգելման և այլ թեմաների վերաբերյալ: Ստացված արդյունքները վկայում են, որ հարցվածների մոտ 30 տոկոսը կառավարության կարևոր ձեռքբերումն են համարում կոռուպցիայի նվազեցումը, 20 տոկոսը ժողովրդավարության և խոսքի ազատության հաստատումը: Կարևոր ցուցանիշ է նաև, որ հարցվածների 18 տոկոսը կարևորել են հասարակության հոգեբանական վիճակի բարելավման և անարխիայի ու ամենաթողության վերացման դեմ կառավարության գրանցած հաջողությունները:

---

[9] https://www.iri.org/sites/default/files/armenia_poll_may_2019_final.pdf

Այն հարցին, թե արդյո՞ք վերջին 12 ամսում հարցվածները ականատես են եղել կոռուպցիոն դեպքերի, հարցվածների շուրջ 84 տոկոսը նշել է, որ ականատես չեն եղել կոռուպցիոն դրսևորումների: Հարցվածների մեծամասնությունը գտնում է, որ կոռուպցիան երկրում նահանջում է, և կառավարությունը կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ գործադրում է բավարար ջանքեր: Կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր փոփոխությունները և հաջողությունն, ըստ հարցվածների մեծ մասի, կայանում է կոռուպցիոն տարբեր սխեմաների բացահայտման աշխատանքները, նախկին

օլիգարխիկ համակարգի ճնշումը, կաշառք վերցնելու և ստանալու դեպքերի բացահայտումը, կրթական առողջապահական ոլորտներում կաշառքի վերացումը:

43. Միաժամանակ, հարցման ենթարկվածները, որպես առավել կոռումպացված կառույցներ, մատնանշել են բանակը, ոստիկանության, դատական և կրթական համակարգերը, իսկ որպես կոռուպցիայի տարածված դրսևորում՝ հովանավորչությունը և աշխատանքի տեղավորման գործընթացում կոռուպցիոն ռիսկերը:

44. Հեղափոխությունից հետո ձևավորված Կառավարության վարած հակակոռուպցիոն քաղաքականության մասին խոսելիս քաղաքացիները հիմնականում նշել են, որ բարձր մակարդակում կոռուպցիայի դեմ պայքարի առումով իշխանությունն արդեն իսկ գրանցել է բավականին լուրջ առաջընթաց, ցուցաբերել է քաղաքական հստակ կամք, այդուհանդերձ, անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել նաև տեղական և համայնքային մակարդակներում նմանատիպ փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ:

45. Հարցման մասնակիցները նշել են, որ կողջունեին ՀՀ Կառավարության կողմից կոռուպցիայի հետևանքների վերաբերյալ հանրային իրազեկման և կոռուպցիոն գործերի բացահայտման գործընթացում թափանցիկության ապահովումը:

46. Հարցման արդյունքների վերլուծությամբ կարելի է արձանագրել, որ հարցվածների կողմից նշված առաջնահերթությունները հիմնականում համընկնում են ՀՀ Կառավարության սահմանած առաջնահերթություններին:

47. Ակներև է, որ սույն Ռազմավարության շրջանակում ներառված միջոցառումներն իրենց գաղափարական ուղղվածությամբ և հենքով անպայմանորեն պետք է արտացոլեն վերը հիշատակված գաղափարներն ու մտայնությունները: Այլապես, ուղղակիորեն կխախտվի քաղաքացի-Կառավարություն հետադարձ կարևոր կապը: Այս իմաստով սույն ռազմավարությունը պետք է լինի քաղաքացի-պետություն համաձայնեցված և փոխպայմանավորված կամքի արդյունք, որի ապահովման գործում առանցքային տեղ է վերապահված նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

### 1.3. Հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները և գնահատումները

48. 2015-2018 թվականների հաշվետու ժամանակահատվածը հակակոռուպցիոն ոլորտում միջազգային համագործակցության տեսանկյունից աչքի է ընկել առանձնակի ակտիվությամբ: 2005թ. ՀՀ-ը ստորագրել է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան, որը 2006 թ. վավերացվել է ՀՀ ԱԺ-ի կողմից, իսկ կոնվենցիայի դրույթները ՀՀ համար ուժի մեջ են մտել 2007թ. ապրիլի 7-ին[10]:

[10] Լինելով ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի անդամ՝ ՀՀ-ը պարբերաբար ենթարկվում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի իրականացման մոնիթորինգի: 2015 թվականին մեկնարկել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կիրառման վերանայման երկրորդ փուլը, որը կտևի 5 տարի: Դրա շրջանակներում 2018 թվականից մեկնարկել է Սերբիայի և Դոմինիկյան Հանրապետության կողմից Հայաստանի կողմից Կոնվենցիայի 2-րդ (Կանխարգելման միջոցները) և 5-րդ (Ակտիվները վերադարձնելու միջոցները) գլուխների կիրառման վերանայման գործընթացը

2004 թ. հունվարին Հայաստանն անդամակցել է Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբին՝ ԿԴՊԽ-ին (GRECO): 2017 թվականի դեկտեմբերին, ԿԴՊԽ-ի հերթական լիագումար նիստում ընդունվել է ՀՀ վերաբերյալ 4-րդ փուլի գնահատման համապատասխանության «Կոռուպցիայի կանխարգելումը Ազգային ժողովի պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» թեմայով զեկույցը,

որի արդյունքում Հայաստանին տրված 18 հանձնարարականներից 17-ով գրանցվել է առաջընթաց: Մասնավորապես, զեկույցում արձանագրվել է, որ բավարար ձևով իրականացրել է 18 առաջարկություններից 5-ը, մնացածների 12-ը մասնակի են կատարվել և մեկը չի կատարվել:

49. Հայաստանը 2003թ.-ից ներգրավված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում: 2014 թվականի հոկտեմբերից մեկնարկել էր ՏՀԶԿ մոնիթորինգի 4-րդ փուլը, որն ավարտվել է 2018 թվականի հոկտեմբերի 26-ին՝ 4-րդ փուլի արդյունքների վերաբերյալ զեկույցի հրապարակմամբ: Մոնիթորինգի արդյունքում արձանագրվել է, որ տվյալ փուլում գնահատվող Հայաստանին ներկայացված 21 հանձնարարականները կատարվել են, ընդ որում, 3-ը՝ ամբողջությամբ, 8-ը՝ զգալիորեն, 10-ը՝ մասնակի: Արդյունքում, Հայաստանին ներկայացվել է 24 ընդհանուր բնույթի և ևս 5 բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող հանձնարարական: Հատկանշական է, որ ընդհանուր հանձնարարականները վերաբերում են հակակոռուպցիոն քաղաքականությանը, կոռուպցիայի կանխարգելմանը և կոռուպցիայի քրեականացմանը: Հայաստանի Հանրապետությունը 2003 թվականի մայիսին ստորագրել և 2004 թվականի հունիսին վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, ինչպես նաև 2004 թվականի փետրվարին ստորագրել և դեկտեմբերին վավերացրել է «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան:

50. Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետ՝ նաև ԵՀՔ) շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006 թ. վավերացրել են գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ:

51. Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2015-2018թթ. և 2019-2022 թթ. գործողությունների ծրագրերով արդյունավետ կառավարումը և կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում են համագործակցության առանցքային ուղղություններ:

52. 2011 թվականին Հայաստանը միացել է Բաց կառավարման համագործակցությանը, որի հիմնական առաքելությունն է՝ անդամ երկրներում թափանցիկ, հաշվետու և արդյունավետ կառավարման ապահովումը: Հայաստանը, միանալով այս նախաձեռնությանը, ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց շարքում է նաև կոռուպցիայի դեմ պայքարը: ԲԿԳ շրջանակներում ընդունվել են 4 գործողությունների ծրագրեր՝ 2012-2014, 2014-2016, 2016-2018, 2018-2020 թվականների համար: Կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության դերը, ինչպես նաև զիտակցելով միջազգային մասնագիտացված կառույցների կողմից ներկայացված առաջարկությունների կատարման արդյունքում ոլորտի օրենսդրական և կառուցակարգային զարգացումը՝ սույն Ռազմավարությամբ և միջոցառումների ծրագրով նախատեսված ուղղությունները, գործողությունները բխում են նաև վերոնշյալ կազմակերպություններին անդամակցության և վերջիններիս գնահատումների արդյունքում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումից:

## ԳԼՈՒԽ 2.
## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### 2.1. Հակակոռուպցիոն ռազմավարության հետապնդած առանցքային նպատակները և առաջադրված հիմնական խնդիրները

53. Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը:

54. Հիշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են այնպիսի խնդիրներ (վերջնական կամ միջանկյալ արդյունքներ), ինչպիսիք են կոռուպցիայի դեմ պայքարն առավել նպատակային իրականացնելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հենքերի ստեղծումը և զարգացումը, հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը, ոլորտային օրենսդրական դաշտի կարգավորումներում երկակի մոտեցումներ կիրառելու հնարավորությունների հնարավորինս նվազեցումը, հանրային վերահսկողության ապահովման նպատակով թափանցիկության և մասնակցայնության գործիքների շարունակական ներդրումը: Ռազմավարությունը նպատակ ունի նաև իրավական և գործնական արդյունավետ մեխանիզմների սահմանմամբ բարձրացնելու կոռուպցիոն գործերի բացահայտման արդյունավետությունը և այլն: Հատկանշական է, որ ռազմավարությունը կազմելիս առավելագույն չափով հաշվի են առնվել նաև 2013 թ. հոկտեմբերի 21-22-ի հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի հայտարարությամբ սահմանված ուղենիշային պահանջներն ու իրավագաղափարական ելակետերը, որոնք, անշուշտ, ունեն չափազանց կարևոր նշանակություն նշված ծրագրային փաստաթղթերի կազմման հարցում:
i

55. Առանձին ուշադրություն է դարձվել նաև ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանություն տալու մասին» թիվ 42 արձանագրային որոշմամբ սահմանված պահանջներին: Մասնավորապես, հաշվի է առնվել այն հայեցակարգային պահանջը, որ ռազմավարական փաստաթղթերը պետք է պարունակեն փաստաթղթում նշված նպատակին հասնելու համար ճանապարհների, գործողությունների կամ միջոցառումների նկարագրությունը՝ հիմնավորելով այդ գործողությունների հստակ կապն ակնկալվող արդյունքների հետ: Ռազմավարությունը, որպես առաջադրված խնդիր, նախատեսում է նաև՝

1) հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի վերափոխումը և զարգացումը.

2) վարչական կոռուպցիայի հաղթահարումը՝ ոլորտային կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց նվազեցման, էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների ներդրման ու շարունակական կատարելագործման միջոցով.

3) հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովման համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ.

4) ոլորտային իրավական կարգավորումների պարզեցումը և հստակեցումը, կարգավորման ազդեցության գնահատման ինստիտուտի դերի բարձրացումը.

5) բիզնեսի և քաղաքականության տարանջատման հստակ սահմանների ապահովումը, տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը և երաշխավորումը.

6) կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրացման երաշխավորումը, օրենսդրության

շարունակական կատարելագործումը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի օրենքով սահմանման միջոցով.

7) ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանումը և ներդրումը, միջազգային չափանիշներին դրանք համապատասխանության ապահովումը, միջազգային համագործակցության ամրապնդումը.

8) հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը, ներառյալ՝ ազդարարման ինստիտուտի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման միջոցով, պահանջատեր քաղաքացու ձևավորումը.

9) մոնիթորինգի արդյունավետ մեխանիզմի արդյունքում՝ ժամանակավրեպ միջոցառումների արդիականացման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը:

56. Ռազմավարությամբ առաջադրված խնդիրներն իրականացվելու են այլ ռազմավարություններով ևս, այդ թվում՝ դատաիրավական, ընտրական, առաջադրված միջոցառումների հետ համարժեք համադրելիությամբ՝ բացառելով դրանց միջև ժամանակային և բովանդակային խզումների առաջացումը:

57. Որպես Ռազմավարության հաջողման գրավական՝ ակնկալվում է բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը Ռազմավարությամբ և դրա իրականացման միջոցառումների ծրագրով առաջադրված խնդիրների և մարտահրավերների հաղթահարման գործում:

## ԳԼՈՒԽ 3.
## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ

58. Հակակոռուպցիոն քաղաքականության ուղղություններին անդրադառնալիս անհրաժեշտ է նախևառաջ հստակ ձևակերպել հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ մոդելի տեսլականը:

59. Թավշյա հեղափոխությանը հաջորդած նոր իրողությունները փաստեցին, որ ՀՀ Կառավարությունը դրսևորում է անհրաժեշտ և բավարար քաղաքական կամք կոռուպցիայի դեմ պայքարում էական արդյունք արձանագրելու հարցում: Այդուհանդերձ, քաղաքական կամքին զուգընթաց կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարի համակարգված իրականացումը: Այս առումով հաջողության հասնելու գլխավոր գրավականներից մեկը կայացած հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի առկայությունն է:

60. Ինստիտուցիոնալ համակարգի ընդհանրական պատկեր ունենալու տեսանկյունից անհրաժեշտ է ապահովել կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ անկախության երաշխիքների սահմանումը, համապատասխան կառուցակարգերի ներդրումը և զարգացումը, համագործակցության ամրապնդումը: Վերոնշյալի համատեքստում առաջարկվում է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի հետևյալ՝ տարանջատված մոդելի տեսլականը՝ վերջինիս արդարացման դեպքում ունիվերսալ մոդելին անցում կատարելու հնարավոր հեռանկարներով:
i

61. Նախորդ ռազմավարության արդյունքում օրենսդրական մակարդակով քայլեր էին ձեռնարկվել հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմնի ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես, 2017 թվականի հունիսի 9-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի և հարակից օրենքներում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթով Հայաստանում նախատեսվում էր ստեղծել անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմին: Այդուհանդերձ, Հանձնաժողովը մինչ օրս չի ստեղծվել: Հանձնաժողովի չստեղծման հիմնական պատճառը կազմավորման կարգի կառուցակարգերի խրթին և թերի ձևակերպումն էր:

62. Մասնավորապես, վերը նշված օրենքի 11-րդ և 13-րդ հոդվածները սահմանում էին, որ Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ)՝ Սահմանադրական դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների, Հանրային խորհրդի և Փաստաբանների պալատի մեկական թեկնածուների մասնակցությամբ: Խորհրդի անդամների ընտրության չափանիշներն ու ընթացակարգը օրենքով սահմանված չեն: Գործնականում մրցութային խորհուրդը, թեև ժամկետի խախտմամբ, բայց ստեղծվել էր: Խորհրդի անդամների փաստամբ թեկնածուների մրցույթը տեղի չի ունեցել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդի գործառույթները բավականին ծավալուն էին, և պրակտիկորեն անհնար էր դրանք իրագործել 45-օրյա ժամկետում: Բացի այդ, վերը նշված օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Խորհրդի նիստն իրավազոր է Խորհրդի առնվազն չորս անդամի մասնակցության դեպքում, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդի գործունեության ժամանակահատվածը համընկել է ընտրությունների հետ, նիստերը հիմնականում իրավազոր չեն եղել:

63. Վերոգրյալի համատեքստում սույն Ռազմավարությամբ կարևորվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմավորման ուղղությամբ հրատապ քայլերի ձեռնարկումը:

64. Այս առումով, առաջարկվում է, պահպանելով Հանձնաժողովի կազմավորման մրցութային եղանակը, այդուհանդերձ փոփոխել վերջինիս կազմավորման կարգը և գործառույթների շրջանակը: Միաժամանակ, Հանձնաժողովի հրատապ կազմավորման օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկվում է Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով՝ Կառավարության, Ազգային ժողովի խմբակցությունների, Բարձրագույն դատական խորհրդի առաջադրած մեկական թեկնածուներից՝ 6 տարի, 4 տարի և 3 տարի պաշտոնավարման ժամկետներով:

65. Հանձնաժողովի անկախության ապահովման նպատակով կարևորվում է ոչ միայն Հանձնաժողովի անդամների նշանակման, այլև պաշտոնեական լիազորությունների դադարեցման անկախ կառուցակարգերի սահմանումը:

66. Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է սահմանել, որ Ազգային ժողովը Հանձնաժողովի անդամի լիազորությունները, օրենքով սահմանված դեպքերում, կարող է դադարեցնել միայն Հանձնաժողովի համաձայնությամբ:

67. Հանձնաժողովի ֆունկցիոնալ արդյունավետության ապահովման տեսանկյունից առաջարկվում է զգալիորեն ընդլայնել Հանձնաժողովի գործառույթները՝ առկա 5-ի փոխարեն վերջինիս վերապահելով կոռուպցիայի կանխարգելմանը և հակակոռուպցիոն կրթության ապահովմանն ուղղված 13 գործառույթ:

68. Այսպես, օրենսդրական փոփոխությունների արդյունքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենքով վերապահված գործառույթներից զատ անհրաժեշտ է վերապահել հետևյալ գործառույթները.

1) իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման իրականացումը.

2) իր կողմից մշակված հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների կատարման նկատմամբ մոնիթորինգի իրականացումը և դրանց վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացումը..

3) հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակում և իրականացման համակարգումը.

4) հակակոռուպցիոն ոլորտում հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակումը և դրանց իրականացման համակարգումը.

5) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, դատախազի, քննիչի), 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների սահմանումը,

6) պետական պաշտոն զբաղեցնող անձանց 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերների կանոնների պահպանման միասնականության ապահովումը, այդ թվում՝ նվերների միասնական հրապարակային ռեեստրի վարման միջոցով.

7) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացումը.

8) բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքների համակարգումը:

69. Իր գործառույթների լիարժեք իրականացման համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ունենալու է հետևյալ մասնագիտական ստորաբաժանումները.

1) հայտարարագրերի վերլուծության վարչություն,

2) վարույթների և իրավական ապահովման վարչություն.

3) անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների, բարեվարքության և շահերի բախման վարչություն.

4) կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն.

5) մեթոդական աջակցության վարչություն.

6) բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչություն:

70. Ընդ որում, Հանձնաժողովի կազմավորման պահից գործելու են հայտարարագրերի վերլուծության և վարույթների և իրավական ապահովման վարչությունները: Մյուս մասնագիտական ստորաբաժանումները՝ անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների, բարեվարքության և շահերի բախման վարչությունը, կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը, մեթոդական աջակցության վարչությունը և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչությունը, սկսելու են գործել 2020 թվականից: Միաժամանակ,

գործունեությունն արդյունավետ իրականացնելու նպատակով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին գործիքակազմ տրամադրելու տեսանկյունից կարևորվում է Հանձնաժողովին բանկային գաղտնիք պարունակող տվյալներին հասանելիություն տրամադրելու հարցը:

71. Կոռուպցիայի դեմ պայքարում կայացած ինստիտուցիոնալ համակարգի երկրորդ կարևոր բաղադրատարրը կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառույթով և անկախության երաշխիքներով օժտված, մասնագիտացված մարմնի առկայությունն է:

72. Ներկայումս ՀՀ-ում քրեական գործերով նախաքննություն կատարում են ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները: Նշվածից հետևում է, որ կոռուպցիոն հանցագործությունների քննությունը մեկ մարմնի կողմից չի իրականացվում, մինչդեռ կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը կարող է երաշխավորված լինել միայն այն պարագայում, երբ այդ գործառույթը վերապահված է մեկ մարմնի՝ այդպիսով ապահովելով միասնական չափանիշներով քննության կազմակերպումը: Միջազգային գործընկեր կազմակերպություններն իրենց հերթին բազմիցս բարձրացրել են նշված հարցը՝ պնդելով, որ Հայաստանում կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածությունը կոռուպցիոն հանցագործությունների արդյունավետ քննության հիմնական մարտահրավերներից է: Այս առումով, Ռազմավարությամբ սահմանված հաշվետու ժամանակահատվածում կստեղծվի մասնագիտացված, անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն մարմին, որը կիրականացնի ուսումնասիրություններ, օժտված կլինի կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման համար անհրաժեշտ գործիքակազմով:

73. Վերոնշյալի կատարման ապահովման տեսանկյունից առաջարկվում է ստեղծել հակակոռուպցիոն մասնագիտացված մարմին՝ «Հակակոռուպցիոն կոմիտե» անվանմամբ՝ հետևյալ մոդելով.

1) Քննչական կոմիտեի Կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռհանցագործությունների քննության վարչությունը վերակազմակերպել՝ կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները և գործիքակազմը փոխանցելով Հակակոռուպցիոն կոմիտեին.

2) Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը վերակազմակերպել՝ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման համար նախատեսված հաստիքների և գործիքակազմի մի մասը փոխանցելով Հակակոռուպցիոն կոմիտեին և Հատուկ քննչական ծառայությանը.

3) Պետական եկամուտների կոմիտեի՝ հանցագործությունների քննության համար նախատեսված քննիչների հաստիքները և գործիքակազմը փոխանցել Քննչական կոմիտեին.

4) Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչությունը վերակազմակերպել՝ կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները և գործիքակազմը տրամադրելով Հակակոռուպցիոն կոմիտեին: Այս պայմաններում Հատուկ քննչական ծառայությունը կպահպանի խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դեպքերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների

(բացառությամբ կոռուպցիոն հանցագործությունների) նախաքննության իրականացման գործառույթը:
5) Ազգային անվտանգության ծառայության քննչական մարմնի հաստիքները և գործիքակազմը համամասնորեն փոխանցել Հատուկ քննչական ծառայությանը, Քննչական կոմիտեին և Հակակոռուպցիոն կոմիտեին.
6) Սահմանել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում է Հատուկ քննչական ծառայությունը.
7) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների՝ պաշտոնական լիազորությունների հետ չկապված հանցագործությունների քննությունը վերապահվում է Քննչական կոմիտեին:
8) Հատուկ քննչական ծառայության ծառայողների կողմից կատարած կոռուպցիոն հանցագործությունների քննությունը վերապահել Հակակոռուպցիոն կոմիտեին, իսկ այլ հանցագործությունների քննությունը՝ Քննչական կոմիտեին:
9) Հակակառուպցիոն կոմիտեի ստեղծմանը հաջորդող 3 տարին սահմանել որպես անցումային շրջան՝ այդ ընթացքում պահպանելով Հատուկ քննչական ծառայության և Քննչական կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների քննություն իրականացնելու հնարավորությունը, որպեսզի հնարավոր լինի անցումային շրջանում սահուն կերպով ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից գործերի քննության արդյունավետությունը:
74. Ինստիտուցիոնալ համակարգի հաջողման գլխավոր գրավականը, ի սկզբանե, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Հակակոռուպցիոն կոմիտեի համագործակցության գործուն կառուցակարգերի ստեղծումն է: Հանձնաժողովը պետք է հասանելիություն ունենա Կոմիտեի՝ օպերատիվ կարգով ձեռք բերած տվյալներին և հակառակը: Վերոնշյալի միտումով ստեղծվելու է տվյալների էլեկտրոնային միասնական բազա:
75. Հակակոռուպցիոն մարմինների կազմավորման միջազգային չափանիշների համատեքստում անհրաժեշտ է վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի ընտրության կամ նշանակման կարգը՝ սահմանելով տվյալ մարմնի ինստիտուցիոնալ և գործառութային անկախության մակարդակն էականորեն բարձրացնող կարգավորումներ:
76. Առաջարկվում է ընթացիկ գործնական քայլերի ձեռնարկման միջոցով ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի տարածքային մարմինների աստիճանական ձևավորումը:
77. Առաջարկվող մոդելի ստեղծման նպատակով անհրաժեշտ է մշակել դրա ձևավորման և գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական հիմք:
78. Առաջարկվող մարմնի գործունեության արդյունավետության ապահովման տեսանկյունից անժխտելի է Հակակոռուպցիոն կոմիտեին անկախության անհրաժեշտ երաշխիքներով օժտելու հրամայականը:
79. Միաժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով կոմիտեն իր պաշտոնական կայքէջում պետք է հրապարակի կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, այդ թվում՝ վիճակագրական հաշվետվություններ: Կոմիտեի ղեկավարը Կառավարություն պետք է ներկայացնի տարեկան գրավոր հաշվետվություն՝ կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին:
80. Այս առումով, ի տարբերություն ՀՀ-ում գործող այլ քննչական մարմինների, Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի թեկնածուներն ընտրվելու են մրցութային խորհրդի կողմից՝ բաց մրցույթի արդյունքում: Հավասարակշռված ներկայացուցչություն

ապահովելու նպատակով՝ մրցութային խորհուրդը կազմված է լինելու Ազգային ժողովի (կառավարող և ընդդիմադիր խմբակցություններ), Կառավարության և Բարձրագույն դատական խորհրդի առաջադրած երեքական անդամներից: Միաժամանակ մրցութային խորհրդի նիստերը լինելու են բաց զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար և տեսաձայնագրվելու են: Մրցութային խորհրդի կողմից ներկայացված երկուսից երեք թեկնածուներից մեկը Վարչապետի կողմից նշանակվելու է Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար: Մրցութային խորհուրդը, ի թիվս այլնի, պետք է իրավասու լինի ուսումնասիրելու թեկնածուների բարեվարքությունը և կոռուպցիոն գործարքներում ներգրավվածությունը:

81. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները նույնպես ընտրվելու են մրցութային կարգով և վերջիններիս գործառույթների արդյունավետության բարձրացման նպատակով օրենքով սահմանվելու են գործունեությունը մոտիվացնող կառուցակարգեր:

82. Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի, ծառայողների, և, հնարավորության դեպքում, վերջիններիս ընտանիքի անդամների համար օրենսդրությամբ սահմանվելու են անվտանգության և սոցիալական ապահովության երաշխիքներ:

83. Միաժամանակ, անհրաժեշտ է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների մասնագիտական պատրաստման կազմակերպման, վերապատրաստման հատուկ ծրագրերով դասընթացների իրականացում:

84. Միաժամանակ Հակակոռուպցիոն կոմիտեի բոլոր ծառայողները պարբերաբար անցնելու են վերապատրաստման դասընթացներ ՀՀ Արդարադատության ակադեմիայում:

85. Հակակոռուպցիոն կոմիտեի մասնագիտական կազմը համալրվելու է համապատասխան մասնագիտական պատրաստում անցած նոր կադրերի ներգրավման և այլ մարմիններից մասնագիտացված կադրերի փոխանցման եղանակով, որոնք կանցնեն լրացուցիչ վերապատրաստումներ:

86. Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետության ամբողջական պատկերի ուրվագծման առումով անհրաժեշտ է զարգացնել դատախազների մասնագիտացումը: Այս առումով, առաջարկվում է ՀՀ Գլխավոր դատախազությունում ստեղծել կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն՝ միաժամանակ ապահովելով և բարձրացնելով տվյալ վարչության դատախազների, ինչպես նաև մարզերի և Երևան քաղաքի համապատասխան դատախազների մասնագիտացումը:

87. Միաժամանակ առաջարկվում է ՀՀ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կազմում ստեղծել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով իրավասու մասնագիտացված ստորաբաժանում՝ 3 տարվա ընթացքում նշյալ գործառույթը անկախ մասնագիտացված մարմնին վերապահելու տեսլականով:

88. Կոռուպցիայի դեմ պայքարում կայացած ինստիտուցիոնալ համակարգի կայացման և շարունակական զարգացման տեսանկյունից կարևորվում է նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը, որոնք պետք է օգտվեն բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներից, ինչը կհանգեցնի մասնագիտացված դատավորների կողմից գործերի առավել որակյալ, բազմակողմանի և արդյունավետ լուծմանը: Ակնհայտ է, որ կոռուպցիոն բնույթի գործերով մասնագիտացված քննությունը նոր հարթակի վրա կարող է բարձրացնել կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի արդյունավետության աստիճանը՝ խթանելով դրա զարգացումը: Հարցի հրատապությունից ելնելով, որպես միջանկյալ գործողություն, մինչև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը 2020-2021 թթ.-ի

ընթացքում կոռուպցիոն գործերով դատական քննությունը և այդ գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կիրականացնեն հակակոռուպցիոն մասնագիտացված դատավորները:

89. Հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն ստորաբաժանումը և Հակակոռուպցիոն դատարանը ստեղծվելու են միաժամանակ՝ կոռուպցիոն գործերի պատշաճ և արդյունավետ քննությունն ապահովելու համար:

90. ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության կատարելագործման և դրա արդյունավետության բարձրացման նպատակով Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը վերակազմակերպվել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի՝ համապատասխան գործիքակազմով:

91. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը քննարկում է հակակոռուպցիոն ռազմավարությունները և առնչվող իրավական ակտերը, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերը, հակակոռուպցիոն ռազմավարություններից և միջազգային պարտավորություններից բխող միջոցառումների իրականացման գործընթացները, հակակոռուպցիոն ռազմավարությունների և ծրագրերի կատարողականները և մոնիթորինգի արդյունքները, կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում շահագրգիռ կառույցների հետ համագործակցության արդյունքները, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընթացքը:

## ԳԼՈՒԽ 4.
## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

92. Սույն Ռազմավարությամբ սահմանվում են այն ելակետային ու հիմնարար ուղղությունները, որոնք վճռորոշ պետք է լինեն 2019-2022թթ. ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման, կոռուպցիայի դեմ պայքարի և արդյունքում կոռուպցիայի աստիճանական նվազեցման և հաղթահարման համար: Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական երեք ուղղություններն են՝

1) կոռուպցիայի կանխարգելումը,

2) կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը,

3) հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը:

### 4.1. Կոռուպցիայի կանխարգելում

93. Կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու տեսանկյունից կարևորվում է կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված օրենսդրական դաշտի վերանայումը, արդի մարտահրավերներին և միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, կոռուպցիոն ռիսկերի զրոյացմանն ուղղված արդյունավետ կառուցակարգերի ներդրումը, դրանց գործնականում ապահովումը:

94. Այս առումով, Ռազմավարությունը կոռուպցիայի կանխարգելումն իրականացնելու է հետևյալ ենթաուղղություններով.

1) Վարչական կոռուպցիայի հաղթահարում.

2) Հանրային կառավարման համակարգում բարեվարքության ամրապնդում.

3) Հայտարարագրում.

4) Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատում և մասնավոր հատվածում թափանցիկության բարձրացում.

#### 4.1.1. Վարչական կոռուպցիայի հաղթահարում

95. Կոռուպցիոն երևույթների առաջացումը պայմանավորող գործոնների թվում ծանրակշիռ դիրք է զբաղեցնում նաև հանրային կառավարման համակարգում առանձին դեպքերում հանդիպող խրթին ենթակառուցվածքների, բարդ ու խճճված գործընթացների, բյուրոկրատական քաշքշուկների առկայությունը:

96. Միտում ունենալով հնարավորին հաղթահարել վարչական կոռուպցիան՝ առաջարկվում է կոռուպցիոն ռիսկերը կառավարել հանրային կառավարման համակարգը կազմող մարմիններում, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համապարփակ կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրության և վերհանման միջոցով: Այս տեսանկյունից կարևորվում է ինքնագնահատման արդյունքների հիման վրա յուրաքանչյուր մարմնի կողմից ներքին հակակոռուպցիոն և բարեվարքության միջոցառումների ծրագրի մշակումը, որի կատարման վերաբերյալ ՀՀ վարչապետին և հանրությանը պարբերական կներկայացվի հաշվետվություն: Վարչական կոռուպցիայի հաղթահարման կարևորագույն տարրերից է նաև անհրաժեշտ սոցիալական երաշխիքների սահմանումը: Այս համատեքստում կարևորվում է պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխումը: Միաժամանակ, ՀՀ Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն որոշման 3-6-րդ հավելվածներով նախատեսված՝ պետական եկամուտների հավաքագրման, ոստիկանության կողմից քաղաքացիներին ծառայությունների մատուցման, առողջապահության և կրթության ոլորտների այն միջոցառումները, որոնք սահմանված ժամկետում չեն կատարվել, որպես առաջնահերթություն նախատեսվում են տվյալ մարմինների միջոցառումների ծրագրերում:

97. Հանրային կառավարման թափանցիկության և հաշվետվողականության ապահովման, վարչական կոռուպցիայի հաղթահարման նպատակով անհրաժեշտ է ստեղծել այնպիսի կառուցակարգեր, որոնք ինքնաբերաբար ուղղված կլինեն կոռուպցիոն ռիսկերի զրոյացմանը, այդ թվում՝ քաղաքացի-պետություն շփման հնարավորինս սահմանափակման միջոցով: Վերոգրյալի համատեքստում նախատեսվում է էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների, համակարգերի մշակում և ներդրում, դրանց վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացում, ինչը կնպաստի պետական մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, տվյալների անփոփոխելիության, միասնականության և ավտոմատացման ապահովմանը (էլեկտրոնային գործիքները, կներառեն նաև հակակոռուպցիոն նշանակություն ունեցող այնպիսի կարևոր համակարգերի ներդրում, ինչպիսիք են Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակը, Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգը և այլն):

98. Էականորեն կարևորվում է նաև ազդարարման համակարգի շարունակական կատարելագործումն ու զարգացումը միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ: Այս իմաստով ակներև է, որ անհրաժեշտ է նաև հրնթացս արդյունավետ մոնիթորինգի ենթարկել ազդարարման էլեկտրոնային հարթակը առաջացող տեխնիկական կամ բովանդակային խնդիրներին հրատապ լուծում տալու հրամայականով:

### 4.1.2. Հանրային կառավարման համակարգում բարեվարքության ամրապնդում

99. Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունի հանրային ծառայողի բարեվարքության նորմերին համապատասխանող հանրային կերպարի ձևավորումը, համապատասխան վերահսկողության մեխանիզմների ստեղծումը և փաստացի գործարկումը:

i

100. 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» թիվ ՀՕ-206-Ն օրենքով ներդրվել է բարեվարքության համակարգ, որը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը:

101. Չնայած նորմերի առկայությանը՝ փաստացի դրանց ապահովումը գրեթե հնարավոր չի եղել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշյալ օրենքով տվյալ դրույթների կիրառումը փաստացի պայմանավորված է եղել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծման հանգամանքով: Ուստի, բարեվարքության համակարգի կայացման առումով ևս կարևորվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անհապաղ ստեղծումը:

102. Բարեվարքության ապահովման կարևոր բաղադրատարրերից է պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների ընդունումը, դրանց վերաբերյալ վերապատրաստումների անցկացումը և տվյալ կանոնների պահպանման նկատմամբ շարունակական հսկողության իրականացումը: Բարեվարքության տեսանկյունից կարևորվում է քաղաքական որոշումներ կայացնողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանումը (տվյալ միջոցառումը սահմանված էր նաև նախորդ ռազմավարությամբ, սակայն գործնականում այն չի իրականացվել):

103. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, ի թիվս այլ գործառույթների, ինչպես նշվեց, կվերապահվի ««Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելու գործառույթ:

104. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ստեղծումը և դրան վերոնշյալ գործառույթների վերապահումը կնպաստի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների բարեվարքության համակարգի լիարժեք և արդյունավետ գործունեությանը, ազնիվ, բարեխիղճ և գործունյա հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կերպարի ստեղծմանը, հանրային ծառայության համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը:
i

105. Բարեվարքության ապահովման հաջորդ կարևոր երաշխիքը 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» թիվ ՀՕ-206-Ն օրենքով նախատեսված հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորումն է: Էթիկայի հանձնաժողովները՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ համագործակցությամբ պետք է հետևեն հանրային ծառայողների կողմից բարեվարքության պահանջների պահպանմանը:

**4.1.3. Հայտարարագրում**

106. Բարեվարքության համակարգի տրամաբանական շարունակությունն է հանդիսանում հայտարարագրման համակարգը: Կոռուպցիայի կանխարգելման գործում

չափազանց կարևորվում է հանրային ծառայության մեջ գտնվող անձանց, նրանց ընտանիքի անդամների գործունեության և ունեցվածքի նկատմամբ իրական հանրային վերահսկողության իրականացման համար համարժեք թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների ստեղծումը: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունն աստիճանաբար անցում է կատարելու համընդհանուր հայտարարագրման ինստիտուտի ներդրմանը:

107. Այս առումով կարևորվում է հայտարարագրման համակարգի կատարելագործումը, այդ թվում՝ հայտարարատուների և նրանց ընտանիքի կազմի շրջանակի, հրապարակման ենթակա տվյալների ցանկի ընդլայնումը, հայտարարագրի բովանդակության վերանայումը, գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման միասնական համակարգի փաստացի ստեղծումը և գործարկումը: Հայտարարատուների շրջանակի և նրանց ընտանիքի կազմի անդամների շրջանակի ընդլայնումը պայմանավորված է հետագայում համընդհանուր հայտարարագրման անցնելու հրամայականով: Հայտարարագրի բովանդակության վերանայման շրջանակներում իջեցվելու է հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի, այն է՝ 8 մլն. ՀՀ դրամ, արժեքային շեմը, սահմանվել է փաստացի օգտագործվող գույքի հայտարարագրման պահանջ, հստակեցվելու են փոխառությունների և եկամուտների տեսակները, ներդրվելու է ծախսերի հայտարարագրման համակարգ:

108. Հայտարարագրերի վերլուծության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է ներդնել իրավիճակային հայտարարագրի ինստիտուտը:

109. Պաշտոնատար անձանց կոռուպցիոն ներգրավվածությունը բացառելու համար առաջարկվում է ներդնել այնպիսի նոր համակարգ, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող անձինք համապատասխան լիազոր մարմնին նոտարական կարգով կլիազորեն աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին:

### 4.1.4. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատում և մասնավոր հատվածում թափանցիկության բարձրացում

110. Պրակտիկան ցույց է տվել, որ օրենսդրական կարգավորումներում երկակի մոտեցումների առկայությունը շատ հաճախ տարածական մեկնաբանման տեղիք է տալիս՝ ըստ այդմ առաջացնելով նորմի արդյունավետ կիրառման ռիսկեր:

111. Միաժամանակ, ներկայում գործող կարգավորման ազդեցության գնահատման համակարգը հնարավորություն չի տալիս վերհանելու իրավական ակտերի առկա և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, միաժամանակ, կառուցակարգային առումով մտորելու տեղիք է տալիս:

112. Այս առումով, Ռազմավարությունը նախատեսում է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցությանն առնչվող օրենսդրական դաշտի վերանայում, հստակ չափանիշների սահմանում, և՛ իրավական ակտերի նախագծերի, և՛ արդեն իսկ ընդունված իրավական ակտերի պարբերական գնահատում: Առաջարկվում է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման գործառույթի իրականացումը վերապահել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ ապահովելով անհրաժեշտ կարողությունների զարգացումը և համապատասխան աշխատակիցների մասնագիտացումը:

113. Մասնավոր հատվածում թափանցիկության բարձրացման կարևոր գործիքներից է պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը և նրանց վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և հանրամատչելի հարթակի ներդրումը՝ ապահովելով իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը:

114. Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման գործուն մեխանիզմներ ներդնելու նպատակով կմշակվի ճանապարհային քարտեզ, որով կնախանշվեն իրական սեփականատերերի բացահայտման առաջնային ոլորտները և համապատասխան ժամկետները: Կմշակվի և կներդրվի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի գրանցամատյան ստեղծելուն ուղղված համապատասխան ծրագրային ապահովում: Ճանապարհային քարտեզին համապատասխան ոլորտային օրենքներով աստիճանաբար կսահմանվեն իրական սեփականատերերի բացահայտմանն ուղղված դրույթներ:

115. Էլեկտրոնային հարթակում իրավաբանական անձանց իրական սեփականատերերի վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը իրավասու պետական և քաղաքացիական հասարակության կողմից կօգտագործվի որպես վերահսկողության գործիք՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացումը բացառելու, պետական գնումների գործընթացի թափանցիկությունը ապահովելու նպատակով:

116. Մասնավոր հատվածում հակակոռուպցիոն կառուցակարգերի ներդրման տեսանկյունից կարևորվում է ազատ տնտեսական մրցակցության, տնտեսական գործունեության ազատության երաշխավորումը, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը:

117. Այս առումով, անհրաժեշտ է ներդնել կազմակերպությունների հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ կառուցակարգեր, շարունակել տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները՝ կատարելագործելով գործող կառուցակարգերը և ինստիտուցիոնալ գործիքակազմը:

### 4.2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում

118. Կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն բաղադրիչ է նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը:

119. Այս առումով, բացահայտման արդյունավետության տեսանկյունից կարևորվում է, նախևառաջ, կոռուպցիոն հանցագործությունների տեսակների հստակեցումը և դրանց շրջանակի օրենքով սահմանումը: Ըստ այդմ, փոփոխություն կկատարվի ՀՀ քրեական օրենսգրքում՝ նախատեսելով կոռուպցիոն հանցագործությունների կողմնորոշիչ ցանկը: Մասնավորապես, Գլխավոր դատախազի կողմից հաստատված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը ներառում է հանցագործությունների բավականին լայն շրջանակ: Մինչդեռ համապատասխան իրավապահ մարմինների մասնագիտացման, ինչպես նաև վիճակագրության մշակման տեսանկյունից առավել նպատակահարմար է ցանկը սահմանափակել բացառապես կոռուպցիոն բնույթ ունեցող հանցագործություններով՝ հիմք ընդունելով նաև ՏՀԶԿ-ի կողմից Հայաստանի գնահատման 4-րդ փուլի զեկույցով առաջադրված հանցագործությունների ցանկը:

120. Կոռուպցիոն դեպքերի բացահայտման, մասնավոր հատվածում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման տեսանկյունից առանձնակի կարևորվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության նախատեսումը և դրա իրացման կառուցակարգերի սահմանումը: Այս առումով, փոփոխություններ կկատարվեն ՀՀ

քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում՝ նախատեսելով համապատասխան կառուցակարգեր:

121. Միաժամանակ, կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետության ապահովումը նախատեսվում է նաև կոռուպցիոն գործերի քննության մեթոդիկայի մշակման և ընդունման, և, ըստ այդմ, քրեական հետապնդման մարմինների մասնագիտացման բարձրացման միջոցով:

122. Ռազմավարության առաջնահերթություններից է լինելու ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործուն կառուցակարգերի սահմանումը և ներդրումը, դրանց միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովումը: Այս առումով կարևորվում է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրումը: Վերոնշյալի նպատակով կմշակվի համապատասխան օրենսդրություն, քայլեր կձեռնարկվեն ինստիտուցիոնալ համակարգի ներդրման ուղղությամբ, կամրապնդվի միջազգային համագործակցությունը: Նախատեսվում է ակտիվների վերադարձն իրականացնել in rem սկզբունքի կիրառմամբ:

### 4.3. Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում

123. Թեև ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են հակակոռուպցիոն կրթական և իրազեկման տարբեր ծրագրեր, սակայն վերջիններս լայնածավալ և համակարգված բնույթ չեն կրում, բացի այդ չեն ապահովում նաև անհրաժեշտ արդյունավետություն: Իրավիճակային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքացիները շատ հաճախ տեղյակ չեն իրականացված բարեփոխումներին, որի արդյունքում չեն օգտվում դրանցից, ինչն էլ իր հերթին հանգեցնում է իրականացրած քայլերի ինքնանպատակ դառնալուն և անարդյունավետությանը:

124. Չնայած այն հանգամանքին, որ հասարակության դերը այս փուլում որոշումների կայացման հարցում ներազդելու առումով առավել քան երբևէ կարևորվում է, ինչի վառ օրինակ է նաև իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացում հասարակության ներգրավվածության ապահովումը, այդուհանդերձ, 2017-2018 թթ-ներին իրականացրած հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ պայքարին մասնակից լինելու, աջակցելու, կոռուպցիոն դեպքերի մասին ազդարարելու պատրաստակամության առումով Հայաստանն աշխարհում զբաղեցնում է վերջին հորիզոնականը: Նշյալը, ինքնին, վկայում է հակակոռուպցիոն կրթության և հակակոռուպցիոն իրավագիտակցության ցածր մակարդակի մասին, ինչը պետական մակարդակով մտորելու և գործուն քայլեր ձեռնարկելու տեղիք է տալիս:

125. Այս առումով առաջարկվում է շարունակական քայլեր ձեռնարկել հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համակարգային և պարբերական հակակոռուպցիոն կրթության տրամադրման հարցում: Ընդ որում, կառուցակարգային հարցերի լուծման նպատակով առաջարկվում է հակակոռուպցիոն կրթության իրականացման գործառույթը վերապահել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ վերջինիս համար սահմանելով կրթական ծրագրերի, ուղեցույցների, պարբերական խորհրդատվական զեկույցների մշակման և հրապարակման պարտականություն:

126. Ընդ որում, նշյալ վերապատրաստումների արդյունավետության բարձրացման և ինքնանպատակության բացառման նպատակով առաջարկվում է ներդնել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների պարբերական գնահատման համակարգ:

127. Միաժամանակ, կարևորելով հակակոռուպցիոն կրթության արմատավորումը դեռևս դպրոցական տարիներից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում դասավանդվում են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող այնպիսի թեմաներ, որոնք ոչ միայն, ըստ էության, հնացած են և վերստին չեն արտացոլում կառավարության որդեգրած մոտեցումները կոռուպցիայի դեմ պայքարում, այլև անհրաժեշտ և բավարար միջոց չեն կոռուպցիայի նկատմամբ կատարյալ անհանդուրժողականության ձևավորման և հակակոռուպցիոն վարքագիծ ուսանելու նպատակի իրագործման՝ առաջարկվում է կատարել ուսումնասիրություն ավագ դպրոցում ուսուցանվող «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ և վերանայել վերջիններիս բովանդակությունը:

128. Անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել բարձրագույն ուսումնական հաստատություններում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որպես պարտադիր առարկա հակակոռուպցիոն կրթությունը ներառելու ուղղությամբ:

129. Կարևորելով քաղաքացիական հասարակության դերը կոռուպցիայի դեմ պայքարում և գիտակցելով հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ անհրաժեշտ է վերջիններիս համար կազմակերպել շարունակական հակակոռուպցիոն վերապատրաստումներ:

130. Միաժամանակ, նախատեսում է պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմինների հետ հարաբերակցվելիս անձանց իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման, ազդարարման համակարգի առանձնահատկությունների, տեղեկատվության ազատության երաշխիքների, հանրային ծառայողների էթիկայի կանոնների վերաբերյալ հանրության և հանրային ծառայողների տեղեկացվածության բարձրացում: Նշյալ ուղենիշի համար առաջարկվում է մշակել և հաստատել հանրային իրազեկման արշավների իրականացման տարեկան ծրագրեր:

## ԳԼՈՒԽ 5.
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

131. Հակակոռուպցիոն ռազմավարության և ոլորտային ծրագրերի իրականացման արդյունավետությունն ապահովվելու է մոնիթորինգի ու գնահատման արդյունավետ համակարգի ներդրմամբ:

132. ՀՀ Կառավարությունը կարևորում է հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հրապարակային, թափանցիկ, նորարար և հասարակության ակտիվ մասնակցության վրա հիմնված մոնիթորինգի ու գնահատման համակարգի ներդրումը:

133. Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի ընթացքի մշտադիտարկման և գնահատման գործառույթներն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը:

134. Ռազմավարության և միջոցառումների ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացնում հաշվետվություն: Նախարարությունը 2 աշխատանքային օրվա

ընթացքում հաշվետվությունների փաթեթը տեղադրում է ՀՀ արդարադատության նախարարության և Խորհրդի կայքէջերում:

135. Առավել համապարփակ ու բազմակողմանի գնահատում ունենալու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպությունները յուրաքանչյուր կիսամյակ կարող են իրականացնել անկախ մշտադիտարկում ու գնահատում և դրանց արդյունքները ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն:

136. ՀՀ արդարադատության նախարարությունը յուրաքանչյուր տարվա սկզբին, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա փետրվարի առաջին տասնօրյակը, նախորդ տարվա միջոցառումների մշտադիտարկման ու գնահատման արդյունքները ներկայացնում է ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ ստեղծված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) քննարկմանը:

137. Խորհուրդը յուրաքանչյուր տարվա վերջում՝ տարեկան ամփոփ հաշվետվությունն ստանալուց ու վերլուծելուց հետո, համապատասխան պատասխանատու մարմինների ներգրավմամբ կարող է վերանայել Ռազմավարությունն ու Միջոցառումների ծրագիրը՝ կատարելով մշտադիտարկման արդյունքների և առաջարկությունների վրա հիմնված համապատասխան փոփոխություններ: Փոփոխությունների իրականացման աշխատանքները համակարգվում է արդարադատության նախարարության կողմից:

138. Ռազմավարության ու միջոցառումների ծրագրի ազդեցության գնահատման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ, որոնց անցկացման հիման վրա չափվում է բարեփոխումների ազդեցությունը և ներազդումը հասարակության վրա: Միջնաժամկետ փուլում իրականացված հարցումների արդյունքների գնահատման ու վերլուծության արդյունքները Խորհրդին ներկայացվելուց հետո, Խորհուրդը կարող է նախաձեռնել Ռազմավարության ու Միջոցառումների ծրագրի, ինչպես նաև իրականացման մեթոդների ու մեխանիզմների վերանայման ու փոփոխությունների նոր շրջափուլ:

139. Գործընթացի նկատմամբ առավել թափանցիկություն ապահովելու նպատակով Ռազմավարությունը և Միջոցառումների ծրագիրը առանձին բաժինների տեսքով տեղադրվում են ՀՀ Արդարադատության նախարարության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Խորհրդի պաշտոնական կայքէջում: Կայքէջերում տեղադրվում են նաև Խորհրդի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

140. Ռազմավարության և Միջոցառումների ծրագրի՝ միջնաժամկետ ու երկարաժամկետ նպատակների մասին հանրությանն ու մասնագիտական շրջանակներին տեղեկատվության փոխանցումն առավել թիրախավորված, արդյունավետ դարձնելու նպատակով մշակվում է Հաղորդակցման ռազմավարություն/գործողությունների ծրագիր, որի իրականացման վերաբերյալ համապատասխան պատասխանատու մարմինները յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն են ներկայացնում Խորհրդին:

## ԳԼՈՒԽ 6.
## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

### 6.1. Մեթոդական նկատառումներ

141. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով պայմանավորված ծախսերի վերլուծությունը և ֆինանսական գնահատականը մշակելիս հիմնված է եղել ստորև ներկայացվող մեթոդաբանության վրա.

142. Շատ գործողություններում առաջին փուլում պետք է կատարվեն գնահատումներ, ուսումնասիրություններ, որոնց հիման վրա էլ կմշակվեն հետագա գործողությունների ավելի ճշգրիտ ծրագրերը, և միայն այդ ժամանակ պարզ կլինեն ստույգ ծավալները, սակագներն ու դրույքաչափերը: Ուստի, հիմք ենք ընդունել մոտավոր նախնական գնահատականները և միջին տիպային դրույքաչափերն ու սակագները:

143. Հաշվարկները կատարելիս օգտագործվել է միջին կամ տիպային ծախսային մոդուլների գործիքը: Օրինակ՝ միջին տիպային տեղական կամ միջազգային գործուղում, դասընթաց կամ դիզայների/խմբագրի աշխատանքի միջին տիպային նախագիծ:

144. Որոշ ծախսերի գնահատման համար օգտագործվել է հենանիշային մոտեցումը կամ միջին տիպային ծախսերի մակարդակը: Օրինակ՝ 500 մ2 տարածք ունեցող գրասենյակային ծախսերի տիպային մակարդակը:

145. Հաշվարկները կառուցվել են MS Excel ծրագրի հիման վրա: Հիմնական դրույքաչափերն ու սակագները բերված են առանձին էջում, որին հղում է տրվում: Ավելի մանրամասն տվյալներ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում առանձին դրույքաչափեր և սակագներ ներկայացվել են առանձնացված էջերում: Յուրաքանչյուր գործողությանը հատկացված է մեկ առանձնացված էջ: Գործողության իրականացման համար անհրաժեշտ ծախսերն ամփոփված են միատեսակ կաղապարում, իսկ հաշվարկների մանրամասները բերվում են այդ կաղապարից ստորև: Բոլոր արդյունքներն ամփոփված են միասնական ամփոփաթերթում:

### 6.1.1. Նշումներ և բացատրություններ ընդհանուր սակագների և դրույքաչափերի վերաբերյալ

146. Յուրաքանչյուր գործողության համար տրամադրած տեղեկույթի, ինչպես նաև պլանավորված գործողության իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների վերաբերյալ գնահատականների հիման վրա նախանշվել են յուրաքանչյուր գործողության համար անհրաժեշտ ռեսուրսների ծավալները:

147. Հաշվարկների ընթացքում ժամկետների նախատեսման համար հիմք է հանդիսացել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրում նախանշված ժամանակացույցը և վերստուգիչ ցուցանիշների կատարման ժամկետները:

148. Աշխատողների երկու տեսակ է ներառված՝ ներգրավվող փորձագետների և պետական համակարգի հիմնական աշխատողներ (երկրորդ տեսակը միայն 1-4 գործողությունների համար): Բոլոր աշխատավարձերը նշված են համախառն:

149. Փորձագետները տարանջատված են տեղական և միջազգային փորձագետների: Տեղական և միջազգային փորձագետների վարձատրության դրույքաչափի հաշվարկային հիմք են ընդունվել օրական համախառն դրույքաչափերը, որը հիմնված է ոլորտում առկա նմանատիպ ծրագրերի համար գնահատվող դրույքաչափերի վրա: Ընդ որում, տեղական փորձագետներին ներգրավում են թե՛ պետական կառավարման մարմինները, և թե՛ միջազգային կազմակերպությունները: Հաշվի առնելով, որ նշված երկու դեպքերում դրույքները էականորեն տարբերվում են, հաշվարկների հիմք է ընդունվել միջին կշռված դրույքը: Պետական համակարգի աշխատողների համար ենթադրվում է բազային աշխատավարձի որոշակի աճ յուրաքանչյուր տարի:

150. Գնաճի սպասվող տարեկան մակարդակ է ընդունվել 4.3%, որը հիմնված է Կենտրոնական բանկի կանխատեսումների վրա: Ենթադրվել է, որ որոշ սակագներ և դրույքաչափեր այս չափով փոփոխություն կկրեն տարիների ընթացքում:

151. Միջազգային փորձագետների ներգրավումը ենթադրում է նաև թարգմանությունների և փորձագետների այցերի կազմակերպման կարիք: Այս տեսակի ծախսերը հետայսու տեքստում կանվանվեն նաև միջազգային փորձագետների ներգրավման հարակից ծախսեր:

152. Որպես մոտեցում է առաջարկվում այն սկզբունքը, որ միջազգային փորձագետը մշակում է մեթոդական հիմքը, պատրաստում է տեղական մասնագետներին, իսկ հետագա տարիների ընթացքում օժանդակում է գործողության արդյունավետ իրականացմանն ու մոնիթորինգի համակարգի ներդրմանը: Այս մոտեցումը, որպես կանոն, նշանակում է, միջազգային փորձագետների ավելի ինտենսիվ ներգրավում միջոցառումների իրականացման առաջին տարիներին:

153. Նախատեսվում է, որ ՄԾ-ում ներառված միջոցառումների յուրաքանչյուր տիրույթի հետ աշխատելու է նույն փորձագետը, որի շնորհիվ հնարավոր է նվազագույնի հասցնել փորձագետների այցերի քանակները, քանի որ յուրաքանչյուր այցելության ընթացքում նա կկարողանա իրականացնել նույն տիրույթի տարբեր գործողությունների հետ կապված անհրաժեշտ գործառույթները: Օրինակ՝ եթե որևէ գործողություն կպահանջեր 3-4 այց, ապա այս մոտեցման ներքո նախատեսվում է միայն մեկ այց, իսկ մյուս այցերի ծախսերը ներառվում են այլ գործողությունների ծախսերի հաշվարկի մեջ:

154. Վերապատրաստումների երեք տեսակ է նախատեսված: Առաջին տեսակն է արտերկրում վերապատրաստումը: Այս վերապատրաստումների մասնակցելու համար որոշակի մասնակցության կամ անդամության վճար է նախատեսված, որը սակայն մասնակցության վճարը ամբողջությամբ չի ծածկում, այլ նախատեսվում է որպես համաֆինանսավորման կամ մասնակցության որոշակի բաժին ապահովելու գործիք: Որպես սկզբունք, ենթադրվում է, որ արտերկրում կամ միջազգային փորձագետների կողմից վերապատրաստված մասնագետները այնուհետև շարունակաբար կվերապատրաստեն կամ կօժանդակեն տեղական մասնագետներին: Տեղական վերապատրաստումները, իրենց հերթին, տարանջատվում են կազմակերպվող և արտապատվիրակվող դասընթացների:

155. Արտասահմանյան գործուղումների հաշվարկների հիմքում ընկած են հիմնական ուղղություններով գործուղումների նորմերը: Մյուս ուղղություններով գործուղումները, որպես կանոն, ֆինանսավորում է հրավիրող կողմը:

156. Որոշ գործողություններում առաջարկվում է որոշակի լրացուցիչ ռեսուրսների պլանավորում (օրինակ՝ նյութերի, ձեռնարկների մշակման և տպագրության համար կամ գործուղման համար, եթե անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը):

157. Հանրության իրազեկման, հանրային քննարկումների կամ այլ նպատակներով կազմակերպվող հանդիպումների համար նախատեսվել է հանրային միջոցառումների 4 տեսակ՝

- Մոտ 100-200 մասնակից ենթադրող միջոցառում, որը ներկայացուցչական ընդգծված բնույթ չի կրում և ունի 50000 ՀՀ դրամի միջին արժեք:
- Մոտ 50-100 մասնակից ենթադրող որոշակի ներկայացուցչական բնույթ կրող հանրային միջոցառում, որի միջին արժեքն է 200000 ՀՀ դրամ:
- Մոտ 100-200 մասնակից ենթադրող ներկայացուցչական բնույթի հանրային միջոցառում, որի միջին արժեքն է մոտ 1.5 մլն. ՀՀ դրամ:
- Բաց հրապարակային միջոցառումներ՝ մոտ 5 մլն. ՀՀ դրամ միջին արժեքով:

158. Որպես ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեք ընդունվել է 2019 թվականի հունվար-հուլիս ամիսների ՀՀ ԿԲ միջին հաշվարկային փոխարժեքը:

159. Արտապատվիրակված էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի, ծրագրային լուծումների իրականացման համար ենթադրվում է արտապատվիրակում:

160. Առաջարկվող և հաշվարկներում օգտագործած սակագները և դրույքաչափերը ներկայացված են Հավելված 3-ում:

### 6.2. Վերլուծություն, կանխատեսումներ և բյուջեի հաշվարկի մոդելավորում առանձին տիրույթներով. Ծրագրավորված ծախսերի հիմնավորումներ և մեկնաբանություններ

161. Ռազմավարության ընդհանուր Ընդհանուր կարիքների ֆինանսական գնահատականը կազմել է 16,528,044.4 հազար ՀՀ դրամ:

162. Հատկանշական է, որ ինստիտուցիոնալ համակարգի ֆինանսական գնահատականը՝ 11,810,502.2 հազար ՀՀ դրամ:

163. Ըստ տարիների բաշխվածությունը հետևյալն է՝

2019թ. - 2,325,281.3

2020թ. - 4,017,135.6

2021թ. - 5,162,208.8

2022թ. - 5,023,418.7

#### 6.2.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

164. Հանրապետության հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգում առանցքային դերակատարում է հատկացվում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (հետայսու՝ Հանձնաժողով):

i

165. Ինչպես արդեն նշվեց, Հանձնաժողովի անխափան գործունեության համար ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ սահմանվում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմի հաստիքների քանակը 40 է: Միաժամանակ Հանձնաժողովի աշխատանքի արդյունավետության անհրաժեշտությունից ելնելով՝ ռազմավարության գործողության ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի աշխատակազմի հաստիքների քանակը պրոգրեսիվ կարգով աճելու է:

166. Իր գործառույթների լիարժեք իրականացման համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ունենալու է հետևյալ մասնագիտական ստորաբաժանումները.

1) հայտարարագրերի վերլուծության վարչություն,

2) վարույթների և իրավական ապահովման վարչություն.

3) անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների, բարեվարքության և շահերի բախման վարչություն.

4) կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն.

5) մեթոդական աջակցության վարչություն.

6) բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչություն

167. Ընդ որում, Հանձնաժողովի կազմավորման պահից գործելու են հայտարարագրերի վերլուծության և վարույթների և իրավական ապահովման վարչությունները: Մյուս մասնագիտական ստորաբաժանումները՝

անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների, բարեվարքության և շահերի բախման վարչությունը, կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունը, մեթոդական աջակցության վարչությունը և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչությունը, սկսելու են գործել 2020 թվականից:

168. 2022 թվականին պլանավորված նոր շենքի ծախսերը բաշխված են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Կոռուպցիայի կոմիտեի մասով պլանավորվող ծախսերի միջև 60/40 հարաբերակցությամբ:

169. Շենքը ապահովվելու է էլեկտրաէներգիայով, գազով, ջրամատակարարմամբ, արդյունավետ գործունեության ապահովման նպատակով նախատեսվում է նաև համագործակցել միջազգային Bureau van Dijk կազմակերպության հետ:

170. Աշխատավարձերի հաշվարկների մեջ հիմք է ընդունվել Ռազմավարության և ՄԾ տեղեկույթը: Բացի դրանից, ի գիտություն են ընդունվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի դրույթները: Ենթադրվել է նաև, որ բազային աշխատավարձը աճելու է:

171. Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտության ծավալի գնահատման համար առաջին տարիներին նախատեսվել են համակարգիչներ ինչպես աշխատողների համար, այնպես էլ լրացուցիչ՝ ընդհանուր նպատակների համար, իսկ հաջորդող տարիներին՝ նաև թարմացնելու համար:

172. Նախատեսվել են հանրային միջոցառումներ՝ հանրային կարծիքի վերհանման և հանրությանը իրազեկելու համար:

173. Գործողության երրորդ և չորրորդ տարիներին ենթադրվում է միջազգային փորձագետի ներգրավում՝ Հանձնաժողովի գործառույթների ընդլայնման հետ կապված առաջարկությունների մշակմանը աջակցելու համար:

174. Վարչական ծախսերի գնահատման համար կիրառվել է հենանիշային մոտեցումը:

### 6.2.2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի ձևավորում

175. Եթե Հանձնաժողովի հիմնական առաքելությունը գտնվում է կանխարգելման տիրույթում, ապա մեկ այլ պետական մարմին կոչված պետք է լինի ստանձնելու կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառույթը: Նմանօրինակ մասնագիտացված մարմին է հանդիսանալու նորաստեղծ Հակակոռուպցիոն կոմիտեն (հետայսու՝ Կոմիտե): Այն մարմնավորելու է փոխկապակցված գործառույթների մեկտեղված մոդելի կիրառումը՝ միտված լինելով այդպիսով բարձրացնելով քրեական գործերով նախնական քննության արդյունավետությունը: Մեծ հաշվով, նոր մարմնի ստեղծման և կայացման գործում կառուցվածքային և ռեսուրսների փոխանցման առումով իրենց ներդրումն են ունենալու ՀՀ Քննչական կոմիտեն, Ոստիկանությունը, Պետական եկամուտների կոմիտեն, Հատուկ քննչական ծառայությունը, Ազգային անվտանգության ծառայությունը:

176. Հակակոռուպցիոն գործունեության երկարաժամկետ հաջողության համար առաջնահերթ նշանակություն կունենա Հանձնաժողովի և Կոմիտեի սերտ համագործակցության ապահովումը: Նմանապես, պետք է կարևորվի էլեկտրոնային միասնական հարթակների առկայությունը: Արդյունավետության իմաստով, ոչ պակաս կանխորոշիչ գործոն կհանդիսանա վերապատրաստումների գործառույթը, որը լավագույն սցենարի դեպքում արդյունքում պետք է ընդգրկի Կոմիտեի ողջ անձնակազմը:

Հատուկ ուշադրության է արժանանում Կոմիտեի գործունեության լիարժեք ինքնուրույնության երաշխիքի հարցը: Ենթադրվում է, որ դրան կնպաստի Կոմիտեի ղեկավարի պաշտոնի հավակնորդների ընտրության համար նախատեսված մրցութային կարգը:

177. Հիմնականում մոտեցումները նույնն են, ինչ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովման համար ծախսերի գնահատման դեպքում:

178. Կոմիտեի ֆինանսական հաշվարկի համար առանցքային նշանակություն ունի վերջինիս կառուցվածքի կանխորոշումը: Այս առումով, հարկ է նշել, որ Կոմիտեն կազմված է լինելու հետևյալ ստորաբաժանումներից.

ա. օպերատիվ-հետախուզական գործունեության վարչություն.

բ. քննչական վարչություն.

գ. ներքին անվտանգության վարչություն.

դ. միջազգային համագործակցության բաժին.

ե. անձնակազմի կառավարման բաժին.

զ. վերապատրաստման ապահովման բաժին.

է. տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին:

179. Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում առաջարկվող կոռուպցիոն հանցագործությունների ցանկին համապատասխան ՀՀ-ում քննվել է շուրջ 1500 դեպք:

180. Վիճակագրական տվյալները համադրելով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել կոմիտեի արդյունավետ գործունեությունը՝ սկզբնական փուլում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների թիվը լինելու է 30, իսկ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց թիվը՝ 60:

181. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական անկախությունն ապահովելու նպատակով քննիչին վճարվող աշխատավարձի չափը նախատեսվում է սահմանել 1 միլիոն ՀՀ դրամ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձին՝ 600.000 ՀՀ դրամ: Միաժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմը բաղկացած է լինելու քաղաքացիական ծառայողներից;

182. Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը ունենալու է 5 մասնագետ, որոնց թվում՝ 2 տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ և 3 համակարգչային սպասարկման մասնագետներ, որոնք պետք է ապահովեն մարմնի արդյունավետ աշխատանքը: Ընդ որում, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի աշխատավարձը պետք է սահմանել 2 միլիոն ՀՀ դրամի չափով, իսկ համակարգչային սպասարկման մասնագետինը՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

183. Հակակոռուպցիոն կոմիտեն ապահովվելու է նաև համապատասխան շենքային պայմաններով: Այն գտնվելու է տեխնիկապես հագեցված նոր շենքում:

184. 3 տարվա տեսլականով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Հակակոռուպցիոն կոմիտեն պետք է տեղափոխվեն հիմնովին վերանորոգված նոր շենք:

185. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մինչև 2020 թվականի ավարտը անցնելու են 8 ամիս տևողությամբ վերապատրաստման դասընթաց ՀՀ Արդարադատության ակադեմիայում:

186. Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ արդարադատության ակադեմիայում վերապատրաստվում են 32 ՀՔԾ քննիչներ՝ եռամյա կտրվածքով, և մեկ ունկնդրի վերապատրաստման միջին արժեքը ներառյալ ԱԱՀ կազմում է 62590 դրամ, ինչպես նաև 650 Քննչական կոմիտեի քննիչներ՝ երկամյա կտրվածքով, և մեկ ունկնդրի վերապատրաստման միջին արժեքը ներառյալ ԱԱՀ կազմում է 23416 դրամ:

187. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների 1/3-րդը համալրվում է վերջին 1 տարվա ընթացքում իրավագիտության ոլորտում բարձրագույն մասնագիտական կրթության ստացած իրավագետներից, որոնք կրթությունից անմիջապես հետո ուսումնառություն են անցել ՀՀ Արդարադատության ակադեմիայում:

188. ՈՒշադրության է արժանի տրանսպորտային միջոցների և տեղական գործուղումների որոշակի քանակի նախատեսումը, որը, հաշվի առնելով Կոմիտեի գործառույթները, խիստ անհրաժեշտ ռեսուրս է հանդիսանում:

### 6.2.3. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծում

189. Անդրադառնալով մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանը, հարկ է նշել, որ վերջինս աչքի կընկնի դատարանների տնօրինության տակ գտնվող մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներով: Հակակոռուպցիոն ողջ համատեքստում մասնագիտացված դատարանի ինստիտուտի հիմնադրումը կարող է դիտվել իբրև համակարգին լրացուցիչ կայունություն և ամբողջականություն հաղորդող քայլ: Հակակոռուպցիոն դատարանը ներառելու է 25 դատավոր, որոնցից 5-ը կունենա քաղաքացիական մասնագիտացում, իսկ 20-ը՝ քրեական: Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի դատավորին վճարվող աշխատավարձի չափ նախատեսվում է սահմանել մոտ 1.500.000 ՀՀ դրամ:

190. Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանը զուգահեռ նաև պետք է համապատասխանաբար ավելացնել ՀՀ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանի դատավորների թիվը:

191. Նախկին երկու գործողությունների հիմնական մոտեցումները կիրառվել են նաև սույն գործողության ծախսերի գնահատումը կատարելիս: Պլանավորվում է 2021 թվականին կազմակերպել 1 հանրային միջոցառում՝ Դատարանի բացումը, որի լուսաբանումը ԶԼՄ-ով լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջի:

192. Դատավորների վերապատրաստումների ծախսերի հաշվարկի համար հիմք է ծառայել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տրամադրած տեղեկույթը:

### 6.2.4. ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության ստեղծում

193. Կոմիտեում քննվող քրեական գործերով մինչդատական քրեական վարույթի օրինականության դատախազական հսկողությունը իրականացնելու է ՀՀ Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանումը: Ռազմավարությունը և, մասնավորապես, ՄԾ-ն հատուկ անդրադարձ են կատարում այս հարցին՝ սահմանելով հատուկ գործառույթներ, որոնց նպատակը, մի կողմից, կլինի կոռուպցիոն գործերով մասնագիտացող հատուկ ստորաբաժանման ստեղծումը և, մյուս կողմից, համապատասխան վարչական միավորների աշխատակիցների շարունակական վերապատրաստումը: Այս համատեքստում, ավելորդ չէր լինի ևս մեկ անգամ ընդգծել Կոմիտեի աշխատանքի նկատմամբ անաչառ և ապաքաղաքական հսկողության կարևորությունը:

194. Հաշվարկների համար հիմք են ծառայել ՄԾ-ն և Ռազմավարությունը, ինչպես նաև հենանիշային մոտեցումը:

### 6.2.5. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում

195. Ներգրավվում է միջազգային փորձագետ՝ կարողությունների գնահատման մեթոդական հիմքը ստեղծելու համար: Նաև միջազգային փորձագետի կողմից պատրաստվում են տեղական փորձագետներ, որոնք հետագայում ներգրավվում են վերապատրաստումների կազմակերպման համար:

196. Կիրառված մեթոդաբանության և ենթադրությունների, ամփոփված տեղեկությունների, կատարված հաշվարկների, առաջարկությունների և կանխատեսումների հիման վրա սույն տիրույթի միջոցառումների ֆինանսավորման ընդհանուր ծավալը գնահատվում է 11,810,502.2 հազար ՀՀ դրամ: Նշված ծավալի հաշվարկները ներկայացված են Հավելված 3-ում:

## 6.3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ. Ծրագրավորված ծախսերի հիմնավորումներ և մեկնաբանություններ

### 6.3.1. 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում

197. Միջազգային փորձագետները կներգրավվեն գնահատման մեթոդաբանության մշակման, մշակված միջոցառումների բարելավման և մոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքներում: Նախատեսված են տեղական գործուղումներ:

### 6.3.2. Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում

198. Միջազգային փորձագետները ակտիվորեն ներգրավվելու են պետական կառավարման համակարգի մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանության և ոլորտային հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակման աշխատանքներին, այնուհետև որոշ չափով՝ գործողությունների իրականացման համակարգման մեջ: Բոլոր փուլերում ակտիվորեն կներգրավվեն տեղական փորձագետներ: Նախատեսված են միջազգային փորձագետների ներգրավման հետ կապված հարակից ծախսեր (նյութերի թարգմանություն, այցերի կազմակերպում): Նախատեսված է նաև կազմակերպել մի շարք հանրային միջոցառումներ:

### 6.3.3. Բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում

199. Միջազգային փորձագետները կներգրավվեն ակտիվորեն Բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրման և համապատասխան առաջարկությունների ներկայացման աշխատանքներին, ինչպես նաև՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի դիտարկմանը: Միջազգային փորձագետները կներգրավվեն նաև միջոցառումների հետագա փուլերին: Նախատեսված են միջազգային փորձագետների ներգրավման հետ կապված հարակից ծախսեր: Տեղական փորձագետներն էլ հատկապես ինտենսիվ ներգրավվում եմ գործողության սկզբնական շրջանում՝ համակարգային ընթացակարգերը ներդնելու համար: Պլանավորվում են արտերկրյա գործուղումներ՝ միջազգային փորձը տեղում

ուսումնասիրելու նպատակով: Նախատեսվում է կազմակերպել հանրային միջոցառումներ:

### 6.3.4. «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում

200. Նախատեսված է տեղական փորձագետի ներգրավում հատկապես գործողության սկզբնական փուլում: Ենթադրվում է, որ մասնագետը կվերապատրաստվի արտասահմանում, այնուհետ կվարի դասընթացներ տեղում: Պլանավորվել է նյութերի դիզայն և տպագրություն մշակված էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցների տպագրության համար: Նախատեսված է փորձի փոխանակմանն ուղղված հանդիպումների կազմակերպում:

### 6.3.5. Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավում

201. Նախատեսվում է միջազգային և տեղական փորձագետների ներգրավվում: Շեշտը ավելի շատ գործողությունների առաջին տարիներին է: Պլանավորվում են միջոցառում-քննարկումներ:

### 6.3.6. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում

202. Գործողությունների իրականացման համար նախատեսվում է տեղական փորձագետի ներգրավում:

### 6.3.7. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում

203. Պլանավորվում է փորձագետների (տեղական և միջազգային) ներգրավում: Միջազգային փորձը տեղում ուսումնասիրելու նպատակով առաջարկվում է գործուղում կազմակերպել: Ենթադրվում է հանրային միջոցառումների կազմակերպում: Կանխատեսվում է, որ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի կատարելագործման ծառայությունները կարտապատվիրակվեն:

### 6.3.8. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում

204. Նախատեսվում է 2019-2020 թթ.-ին տեղական և միջազգային փորձագետների ներգրավում: Պլանավորվում է միջազգային փորձագետի այց, նյութերի թարգմանության ծախսեր: Նախատեսվում են նաև հանրային միջոցառումներ՝ քննարկումներ, ներկայացումներ: Ենթադրվում է, որ նվերների ռեեստրի էլեկտրոնային համակարգի ստեղծման համար աշխատանքները կարտապատվիրակվեն:

### 6.3.9. Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում

205. Նախատեսվում է գործողության տեղական և միջազգային փորձագետների ներգրավում: Միջազգային փորձը տեղում ուսումնասիրելու համար ենթադրվում են գործուղման ծախսեր: Պլանավորվում են նյութերի թարգմանության, փորձագետի այցի ծախսեր: Նախատեսվել են ծախսեր իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման համար:

### 6.3.10. Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում

206. Պլանավորվում է տեղական փորձագետի ներգրավում: Ենթադրվում են գործուղում՝ միջազգային փորձի ուսումնասիրության համար: Առաջարկվում է հանրային նշանակության կազմակերպությունների ղեկավարների համար ամփոփ ձեռնարկի տպագրություն, ինչպես նաև հատուկ տպագիր նյութեր՝ այդ կազմակերպության այցելուներին տեղեկացնելու համար: Նախատեսվում է կազմակերպել ակտիվ միջոցառումներ՝ աշխատանքային քննարկումներ, ներկայացումներ, հանրային նշանակության կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև անձնակազմի հետ: Հանրության իրազեկման և համապատասխան կարծիքների խթանման նպատակով առաջարկվում է օգտագործել սոցիալական ցանցերի և համացանցի ռեսուրսները:

### 6.3.11. Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում

207. Ենթադրվում են գործուղում՝ միջազգային փորձի ուսումնասիրության համար: Նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև ակտիվ միջոցառումներ՝ աշխատանքային քննարկումներ, ներկայացումներ և այլն: Առաջարկվում է գործարար ոլորտի ղեկավարների համար ամփոփ ձեռնարկի տպագրություն, ինչպես նաև հատուկ տպագիր նյութեր՝ համագործակցող ընկերություններում իրազեկում կազմակերպելու համար: Նախատեսվում է տեղական փորձագետի ակտիվ ներգրավում գործողության ողջ ընթացքում, իսկ միջազգային փորձագետի ավելի ակտիվ ներգրավում հատկապես գործողության առաջին մասին: Կանխատեսվում են նյութերի թարգմանության և փորձագետի այցի հետ կապված ծախսեր: Հանրության իրազեկման և համապատասխան կարծիքների խթանման նպատակով առաջարկվում է օգտագործել սոցիալական ցանցերի և համացանցի ռեսուրսները:

### 6.3.12. Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում

208. Ակտիվորեն ներգրավվելու են տեղական և միջազգային փորձագետներ, հատկապես ճանապարհային քարտեզի մշակման փուլում: Սպասվում են գործուղումներ՝ միջազգային փորձի ուսումնասիրության համար: Նախատեսվել են

միջոցառումների և իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներ: Ենթադրվում է, որ իրական սեփականատերերի գրանցամատյանի ծրագրային ապահովման աշխատանքները արտապատվիրակվելու են:

### 6.3.13. Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում

209. Կներգրավվի տեղական փորձագետ, ով կհամակարգի քաղաքացիների իրազեկման աշխատանքները: Հանրության իրազեկման համար նախատեսվում է 2 հանրային միջոցառու, շնորհանդես կազմակերպել:

### 6.3.14. Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում

210. Հանրային իրազեկման համար ակտիվ կօգտագործվեն հեռուստատեսային, սոցիալական կայքերի կապուղիները, իսկ հանրային միջոցառումների ժամանակ մասնակիցներին կբաժանվեն տպագիր նյութեր: Պլանավորվում է մի շարք հանրային միջոցառումների կազմակերպում:

### 6.3.15. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում՝ այդ թվում դիմումների լրացման օրինակելի ձևերի մշակում

211. Կկազմակերպվի հանրության իրազեկման արշավ: Նախատեսվում է աշխատանքներում տեղական փորձագետ ներգրավել:

### 6.3.16. Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և նշված համակարգի հենքի վրա Mygov.am էլեկտրոնային հարթակի ներդրում

212. Նախատեսվում է ծառայությունների արտապատվիրակում:

### 6.3.17. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում

213. Ենթադրվում է ակտիվ աշխատանք միջազգային փորձագետի հետ գործողության բոլոր փուլերում: Նախատեսված են նյութերի թարգմանության և փորձագետի այցերի հետ կապված ծախսեր: Ներգրավվելու են նաև տեղական փորձագետներ:

214. Կիրառված մեթոդաբանության և ենթադրությունների, ամփոփված տեղեկությունների, կատարված հաշվարկների, առաջարկությունների և կանխատեսումների հիման վրա սույն տիրույթի միջոցառումների ֆինանսավորման ընդհանուր ծավալը գնահատվում է 2,211,747.3 հազար ՀՀ դրամ: Նշված ծավալի հաշվարկները ներկայացված են Հավելված 3-ում:

## 6.4. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ. ծրագրավորված ծախսերի հիմնավորումներ և մեկնաբանություններ

6.4.1. Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիմանվրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում

215. Դասընթացների արժեքների վերաբերյալ տվյալներ է տրամադրվել Արդարադատության ակադեմիան: Ներգրավվելու են տեղական և միջազգային փորձագետներ: Պլանավորվում են նյութերի թարգմանության ծախսեր և միջազգային փորձագետի այց:

### 6.4.2. Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով, Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում

216. Նախատեսվում է ծառայությունների արտապատվիրակում:

217. Կիրառված մեթոդաբանության և ենթադրությունների, ամփոփված տեղեկությունների, կատարված հաշվարկների, առաջարկությունների և կանխատեսումների հիման վրա սույն տիրույթի միջոցառումների ֆինանսավորման ընդհանուր ծավալը գնահատվում է 2,020,681.4 հազար ՀՀ դրամ: Նշված ծավալի հաշվարկները ներկայացված են Հավելված 3-ում:

## 6.5. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. Ծրագրավորված ծախսերի հիմնավորումներ և մեկնաբանություններ

### 6.5.1. Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում

218. Ենթադրվում է, որ իրազեկման արշավը կներառի տեսաձայնային հոլովակների ստեղծում և դրանց տարածում հեռուստատեսությամբ, սոցիալական կայքերով, ռադիոյով, տարբեր պետական մարմինների պաշտոնական կայքերով: Նախատեսվում է նաև տեղեկույթի տարածում Երևանի մետրոպոլիտենում, գովազդի արտաքին միջոցներով, ինչպես նաև հանրային միջոցառումների ժամանակ: Հանրային միջոցառումների ժամանակ կտարածվեն նաև տպագիր նյութեր: Արդյունավետ կլինի կազմակերպել մասնակցություն տարբեր հեռուստահաղորդումներին, որը լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջի: Առաջարկվում է նաև հատուկ տեսաֆիլմի նկարահանում և օգտագործում: Դրա համար անհրաժեշտ միջոցները, սակայն, ծախսերի մեջ ներառված չեն: Միջոցառումների իրականացման բոլոր փուլերում կընդգրկվեն թե՛ տեղական և թե՛ միջազգային փորձագետներ: Պլանավորվում է նաև միջազգային փորձագետի այց և նյութերի թարգմանություն:

### 6.5.2. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում

219. Նախատեսվում է ներգրավել տեղական և միջազգային փորձագետներ դասընթացի մշակման փուլում: Միջազգային փորձագետի այց/եր/ի ընթացքում

առաջարկվում է կազմակերպել դասընթաց դասավանդողների համար, ինչպես նաև դասալսումներ՝ հետադարձ կապի տրամադրման նպատակով: Առաջարկվում է պատրաստել տպագիր նյութեր՝ ուսումնական ձեռնարկներ, դասախոսների և առանձին ուսանողների համար: Նշված ձեռնարկների մշակումը առաջարկվում է իրականացնել տեղական փորձագետի ներգրավմամբ՝ միջազգային փորձագետի կողմից հետադարձ կապի տրամադրմամբ: Բուհերում կկազմակերպվեն միջոցառումներ՝ ուսանողներին ծրագիրը ներկայացնելու և նրանց մասնակցության ակտիվությունը բարձրացնելու նպատակով:

### 6.5.3. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում

220. Առաջարկվում է կազմակերպել ուղղորդիչ միջոցառումներ ուսուցիչների համար, ինչպես նաև մշակել և տպագրել ուսուցիչների համար ուղղորդիչ մեթոդաբանական ձեռնարկ: Սա կօգնի ուսուցիչներին թեմայի դասավանդման ընթացքում, թույլ կտա արդյունավետորեն կիրառել նախանշված մեթոդաբանությունը և արդյունքում բարձրացնել դասավանդման արդյունավետությունը: Պլանավորվել են տեղական գործուղումներ՝ դասավանդման ընթացքի ուսումնասիրման և մոնիթորինգի համար:

### 6.5.4. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով

221. Վերապատրաստման ծրագրերի իրազեկվածության բարձրացման ուղեցույցների մշակման համար ներգրավվելու է տեղական փորձագետ: Նախատեսված են վերապատրաստման դասընթացների ծախսեր: Իրազեկվածության բարձրացման ուղեցույցների խմբագրման, դիզայներական մշակման և տպագրության համար պլանավորվել են համապատասխան ծախսեր: Առաջարկվում է նաև հարցի շուրջ աշխատանքային հանդիպումների և քննարկումների կազմակերպում:

### 6.5.5. Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում

222. ՀՀ քաղաքացիական ծառայության ողջ համակարգի բարեփոխման շրջանակում պետության կողմից ձեռնարկված հեռավար ուսուցման մոդելի ներդրման աշխատանքներն ընթացքի մեջ են: Դրանք համակարգում է ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը: Ենթադրվում է, որ Ռազմավարության և ՄԾ-ի տվյալ գործառույթի շրջանակում մշակված մոդուլները կօգտագործեն արդեն իսկ գործարկված հեռավար ուսուցման հարթակները: Այսպիսով, լրացուցիչ տեխնիկական առաջադրանք մշակելու և հետագա ծրագրավորման և ապահովման աշխատանքներ վարելու կարիք չի լինի, որն էլ իր հերթին չի հանգեցնի այդ մասով ֆինանսավորման պահանջի:

### 6.5.6. Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում

223. Գործողության իրականացման համար կներգրավվի տեղական փորձագետ: Հեռարձակման կազմակերպման համար անհրաժեշտ կլինի համապատասխան սարքավորումների ձեռքբերում: Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգի և քաղծառայության տեղեկատվական համակարգի միասնականացման համար կներգրավվեն արտապատվիրակված ծառայություններ:

224. Կիրառված մեթոդաբանության և ենթադրությունների, ամփոփված տեղեկությունների, կատարված հաշվարկների, առաջարկությունների և կանխատեսումների հիման վրա սույն տիրույթի միջոցառումների ֆինանսավորման ընդհանուր ծավալը գնահատվում է 450,116.4 հազար ՀՀ դրամ: Նշված ծավալի հաշվարկները ներկայացված են Հավելված 3-ում:

### 6.5.7. Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում

225. Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբանություն մշակման համար կներգրավվի միջազգային փորձագետ: Հարցումների կազմակերպման և իրականացման համար ակտիվորեն կներգրավվեն տեղական փորձագետներ: Յուրաքանչյուր հարցման համար ենթադրական ընտրանքը կկազմվի մոտ 300 քաղաքացուց: Նախատեսված են հարցաթերթիկների տպագրության ծախսեր, թեև կախված մեթոդաբանության մշակման ընթացքում սպասվելիք միջոցների ընտրությունից (օրինակ՝ էլեկտրոնային եղանակներով), հնարավոր է, որ այս ծախսերը խնայվեն: Առաջարկվում է կազմակերպել դասընթացներ հարցման իրականացմանը ներգրավված թիմի համար, ինչը կօգնի չշեղվել նախանշված մեթոդաբանությունից: Ենթադրվում է, որ հարցումների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կլինի ապահովել տեխնիկական բազա՝ սարքավորումներ և ծրագրային ապահովում:

226. Կիրառված մեթոդաբանության և ենթադրությունների, ամփոփված տեղեկությունների, կատարված հաշվարկների, առաջարկությունների և կանխատեսումների հիման վրա սույն տիրույթի միջոցառումների ֆինանսավորման ընդհանուր ծավալը գնահատվում է 34,997.3 հազար ՀՀ դրամ: Նշված ծավալի հաշվարկները ներկայացված են Հավելված 3-ում:

## 6.6. Դոնոր կառույցների մասնակցություն և օժանդակություն

227. ՀՀ-ում ներկայացված միջազգային դոնոր կառույցները մշտապես օժանդակել են հանրապետությունում պետական մարմինների կողմից որդեգրած զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող բարեփոխումների և ազգային ծրագրերին:

228. Ստորև բերված աղյուսակը փորձ է կատարում ամփոփել և ներկայացնել հաշվետվության հանձնման օրվա դրությամբ հասանելի և շրջանառման ենթակա համապատասխան միջազգային դոնոր կառույցների շահագրգռվածությունը, ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու պատրաստակամությունը և Ռազմավարության, ինչպես նաև ՄԾ-ի առանձին տիրույթների շրջանակներում առկա կամ ակնկալվող ներգրավվածության աստիճանը:

Աղյուսակ 1. Միջազգային դոնոր կառույցների մասնակցությունը և օժանդակությունը՝ ըստ գործողությունների նպատակի կամ Ռազմավարության տիրույթների

| Գործողության նպատակ կամ Ռազմավարության տիրույթ/միջոցառում | Դոնոր կառույց | Ներգրավվածու տրամադրվ ֆինանսավոր կարգավիճ |
|---|---|---|
| Ռազմավարության և ՄԾ-ի ընդունում | ԵՄ | Ավարտված* |
| | ԱՄՆ պետքարտուղարության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրո (ԹՊԻՀ) | Ավարտված |
| | ԵՄ/ԵԽ-ի Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ) երկրորդ փուլի | Ընթացիկ** |
| Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում/ Կոռուպցիայի կանխարգելմանհանձնաժողովիձևավորում և բնականոն գործունեության ապահովում | ԵՄ Թվինինգ | Առաջիկա/հաստ |
| Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում/Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի ձևավորում | Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ) | Առաջիկա/հաստ |
| | ԵՄ Թվինինգ | Առաջիկա/հաստ |
| | ԹՊԻՀ | Առաջիկա/նախն |
| | ԵՄ/ԵԽ-ի ԳԼԿ երկրորդ փուլ | Առաջիկա/հաստ |
| Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում / Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում | ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ) | Առաջիկա/նախն |
| | ԹՊԻՀ | Առաջիկա/նախն |
| | ԵՄ/ԵԽ-ի ԳԼԿ երկրորդ փուլ | Առաջիկա/հաստ |
| Կոռուպցիայի կանխարգելում/ Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում | Համաշխարհային բանկ (ՀԲ) | Առաջիկա/հաստ |
| | ԵՄ/ԵԽ-ի ԳԼԿ երկրորդ փուլ | Առաջիկա/հաստ |
| Կոռուպցիոն գործերի քննություն / Ապօրինի ծագում ունեցող գույքի | ԵՄ/ԵԽ-ի ԳԼԿ երկրորդ փուլ ԹՊԻՀ | Առաջիկա/նախն |

| | | |
|---|---|---|
| բռնազանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում***** | | |

* «Ավարտվածը» վերաբերում է այն դեպքերին, երբ համապատասխան տիրույթի շրջանակում ֆինանսական օժանդակության օգնությամբ իրականացված առանձին գործողություններ կամ միջոցառումներ ավարտվել են, և դրանց եզրափակումն արձանագրվել է:

** «Ընթացիկը» վերաբերում է այն դեպքերին, երբ համապատասխան տիրույթի շրջանակում ֆինանսական օժանդակության օգնությամբ իրականացված առանձին գործողություններ կամ միջոցառումներ դեռևս գտնվում են իրագործման փուլում և դրանց եզրափակման արձանագրությունը առաջիկայում է:

*** «Առաջիկա/հաստատվածը» վերաբերում է այն դեպքերին, երբ համապատասխան տիրույթի շրջանակում առանձին գործողությունների կամ միջոցառումների կտրվածքով դոնոր կառույցի հետ տեղի ունեցած բանակցությունների ընթացքում արձանագրվել է, որ վերջինս հստակորեն նպատակադրված է ներգրավվելու և օժանդակելու: Ենթակա են հաստատման ձևաչափերը, ֆինանսավորման չափաբաժինները, ժամանակացույցը և այլ հարակից հանգամանքները:

**** «Առաջիկա/նախնականը» վերաբերում է այն դեպքերին, երբ համապատասխան տիրույթի շրջանակում առանձին գործողությունների կամ միջոցառումների կտրվածքով դոնոր կառույցի հետ տեղի ունեցած բանակցությունների ընթացքում արձանագրվել է, որ վերջինս ունի ներգրավվելու միայն նախնական հետաքրքրվածություն: Անհրաժեշտ է լրացուցիչ բանակցությունների ճանապարհով հստակեցնել ակնկալվող ներգրավվածության և օժանդակության տիրույթային ուղղությունները, քննարկել և հաստատել նպատակահարմարությունը, ինչպես նաև համակարգել դրանք այլ դոնոր կառույցների հետ՝ ձեռք բերված համաձայնությունների շրջանակում:

***** Չնայած որ, մի կողմից, այս գործողությունն առաջարկվել է ներառել Աղյուսակ 1-ի մեջ, մյուս կողմից, այն ՄԾ-ում որակավորված է իբրև ֆինանսավորում չպահանջող գործողություն: Իմաստային առումով, չի բացառվում, որ այն արդյունքում ունենա դոնորական ֆինանսավորման կարիք: Այնուամենայնիվ, այստեղ առկա է ճշգրտելու անհրաժեշտություն:

**Նշումներ**

- Աղյուսակ 1-ը արտացոլում է ՄԾ-ի կարճաժամկետ և առավել հրատապ կարիքները: Միջնաժամկետ և երկարաժամկետ ուղղություններով դոնորական օժանդակության կարիքը դեռևս չի գնահատվել: Հետևաբար, կանխատեսումներ անել դոնոր կառույցների հնարավոր մասնակցության վերաբերյալ դեռևս վաղ է և ոչ նպատակահարմար: Մի շարք դոնոր կառույցների դեպքում փորձ է կատարվել անմիջական կապ հաստատել պատասխանատու անձանց և գրասենյակների հետ՝ վերջին հասանելի տեղեկատվությունը ստանալու նպատակով: Սակայն, Աղյուսակ 1-ում ամփոփված տեղեկատվությունից զատ որակապես նոր տվյալներ չեն ստացվել:
- Աղյուսակ 1-ի մեկնարկային տարբերակը ներառում էր նաև ֆինանսավորման չափաբաժիններին անդրադարձող սյունակ, սակայն նպատակահարմար գտնվեց հաշվետվության ներկա նախագծում այն բացառել, քանի որ նախնական տվյալներ առկա են միայն մեկ-երկու ուղղությունների, միջոցառումների վերաբերյալ: Բացի այդ, դոնոր կառույցների գերակշռող մեծամասնությունը որդեգրել է մի մոտեցում, որի համաձայն առաջիկա ֆինանսական օժանդակության չափաբաժինների առավել առարկայական քննարկումների և դրանց հաջորդող համաձայնագրերի հարցերը մուտք են գործում

օրակարգ միայն երբ առկա է պետական իրավական ուժ ստացած ռազմավարության և դրան կից գործողությունների ծրագրի կամ միջոցառումների ՀՀ Կառավարության հավանությանն արժանացած համապատասխան ծախսերի գնահատման բացվածքը: Ավելին, որոշ դոնոր կառույցների դեպքում՝ առաջիկա գործողությունների յուրաքանչյուր տիրույթի շրջանակում առաջարկվող օժանդակության մասով նախ պետք է մշակվի ծրագրային նպատակը, թիրախներն ու ակնկալվող արդյունքները, դրանք հաստատվեն ղեկավար անձնակազմի կողմից, և միայն այդ ամենից հետո հնարավոր են դառնում ֆինանսավորման ծավալների շուրջ առարկայական բանակցությունները: Այսպիսով, ներկա Ռազմավարության և ՄԾ-ի առանձին գործողությունների մասով դոնոր կազմակերպությունների ֆինանսական մասնակցության հարցը գտնվում է դեռևս սաղմնային փուլում:

- Աղյուսակ 1-ը չի ներառում ժամանակացույց, քանի որ քննարկվող ուղղություններից մեծամասնության համար այն դեռևս հստակեցված չէ: Ակնկալվում է, որ դոնոր կառույցները իրենց դիրքորոշումը պետք է հայտնեն 2019 թվականի օգոստոսի 15-ին ծրագրավորված աշխատանքային մակարդակում դոնորների համակարգման հանդիպումից հետո: Նույն հանդիպումը կոչված է լինելու անդրադառնալու ՄԾ-ի կտրվածքով ավարտված (կամ ընթացիկ) գործողությունների վերաբերյալ տվյալներ (այդ թվում՝ նաև հատկացված ֆինանսավորման մասով) ամփոփելու և հրապարակելու հարցին: Հետևաբար, այն դեպքում, երբ համապատասխան տվյալները կդառնան հասանելի ներկա աղյուսակը կարող է վերանայվել:

Հավելված N 2<br>ՀՀ կառավարության<br>2019 թվականի հոկտեմբերի 3-ի<br>N 1332-Ն որոշման

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| N | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | |
| | | 2019 թ. | 2020 թ. | 2021թ. | 2022թ. |
| 1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | | |
| N | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | |
| | | 2019 թ. | 2020 թ. | 2021 թ. | 2022թ. |
| 1. | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներն ընտրվել են, հանձնաժողովը կազմավորվել է: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմը ձևավորվել է և ապահովում է հանձնաժողովի աշխատանքների բնականոն գործունեությունը: Հանձնաժողովին տրամադրվել է առանձին տարածք, | Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնմանը | Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնման վերաբերյալ օրենսդրական փա-թեթը ներկայացվել է Ազգային ժողով: Աշխատակազմի հաստիքների թիվն ավելացել է: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, պատասխա-նատվություն կիրառելու համար անհրաժեշտ գործիքակազմ: | | | |
| 2. | Կոռուպցիոն հանցագոր-ծությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում | Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման նպատակով մշակվել է առաջարկությունների փաթեթ և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթը: | Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է: Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ: | Հակակոռուպցիոն մ կոմիտեի տարածքային ստորաբա-ժանումները կազմավորվել են: |
| 3. | Հակակոռուպ-ցիոն մասնագիտաց-ված դատարանների ստեղծում | Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն մասնագիտացված | Մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել հակակոռուպցիոն | Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանները | Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | դատարանների վերաբերյալ միջազգային փորձը: Մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկություն-ների փաթեթ: | մասնագիտացված դատարանների ձևավորմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթ՝ սահմանելով որպես ժամանակավոր լուծում հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտի ներդրումը: Ներդրվել է հակակոռուպցիոն գործերով մասնագիտացված դատավորների ինստիտուտը: | ձևավորվել են: Ապահովված են բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտացված դատարանների գործունեության ապահովման համար: | դատավորները շարունակաբար վերապատ-րաստվում են: |
| 4. | ՀՀ Գլխավոր դատախա-զությունում կոռուպցիոն հանցագոր-ծությունների քննության նկատմամբ վերահսկողու-թյուն իրականացնող վարչության ստեղծում | Մշակվել է ՀՀ Գլխավոր դատախազու-թյունում կոռուպցիոն հանցագոր-ծությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծմանն ուղղված առաջարկություն-ների փաթեթ: | Առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակվել է և ընդունվել է օրենսդրական փաթեթ: | ՀՀ Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն: | ՀՀ Գլխավոր դատախա-զությունում ստեղծված կոռուպցիոն հանցագոր-ծությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության աշխատակիցների համար կազմակերպվել են վերապատ-րաստումներ՝ մասնագիտացումը բարձրացնելու նպատակով: |
| 5. | Հակակոռուպ-ցիոն քաղաքականու-թյան մշակման համար պատասխանա-տու մարմին-ների, հասարակական կազմակեր-պությունների կարողություն-ների զարգացում | | ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման կարողությունները գնահատվել են: | ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՛ պարբերաբար վերապատրաստվում են: Իրավասու ստորաբաժանումների գործառույթները հստակ տարանջատված են | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Ոլորտային հասարակական կազմակեր-պությունների կարողությունները գնահատվել են: Կարողությունների գնահատման արդյունքում Հակակոռուպցիոն քաղաքականության առավել արդյունավետ մշակման և իրականացմանն ուղղված առաջարկությունները ներկայացվել են: | | |
| 6. | Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում | Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների իրականացման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով, իրականացրել է դոնորների համակարգման հանդիպում: Հանդիպման արդյունքները հրապարակվում են: | Յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում 1 նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը: | | |

## 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

| | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
| 7. | 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավար-ման մարմին-ներում կոռուպ-ցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշա-կում և իրականացում | | Մշակվել է տեղական ինքնակառավարման մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիման վրա 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվել են | Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում մշակվել են հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրեր | Հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերը հաստատվել և իրականացվում են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ռիսկերի համապարփակ գնահատումներ | | |
| 8. | Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում` ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում | | Մշակվել է պետական կառավարման համակարգի մարմիններում ռիսկերի գնահատում իրականացնելու մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիման վրա պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում, այդ թվում` պետական մասնակցությամբ կազմակեր-պություններում իրականացվել են ռիսկերի համապարփակ գնահատումներ: | Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա մշակվել են ոլորտային հակակոռուպցիոն, այդ թվում` ներքին բարեվարքության գործողությունների ծրագրեր` այդ թվում ներառելով նախկինում ընդունված միջոցառումների ծրագրերով սահմանված, բայց դեռևս չկատարված գործողություններ: | Քննարկումների (այդ թվում` հանրային), արդյունքում գործողությունների ծրագրերը հաստատ-վել և իրականացվում են |

2.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅ ԻԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (բարեվարքություն)

| | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2019 թ. | 2020 թ. | 2021 թ. | 2022 թ. |
| 9. | Պետական պաշտոններում նշանակման են-<br>թակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում | Բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ միջազգային փորձն ուսումնասիրվել է, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ: «Կոռուպցիայի | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է ««Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում | Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրականացնում է ««Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: | նշանակման ենթակա անձանց բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունների իրականացման և, ըստ այդմ, տվյալ անձին նշանակելու իրավասություն ունեցող անձին նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու գործառույթ: Մշակվել և հաստատվել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների տրամադրման կարգը: | որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա համապատասխան անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն: | նշանակման ենթակա անձանց, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց հիման վրա համապատասխան անձանց ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ: |
| 10. | «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում | 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են: | «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներից բխող բոլոր ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով կազմակերպվել են վերապատրաստումներ: | Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը: Գնահատումների հիման վրա ՀՀ Վարչապետին ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում: | |
| 11. | «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում | | «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային | Վերլուծվել և գնահատվել է Էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնականում | Էթիկայի հանձնաժողովներն ու բարեվարքության հարցերով կազմակերպիչներն օժտվել են իրենց գործառույթները գործնականում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծառայության մասին օրենքներով ձևավորվել են էթիկայի հանձնաժողովներ և բարեվարքության հարցերով կազմակերպիչներ: Մշակվել են էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցներ: | իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը: Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար մշակվել են վերապատրաստման ծրագրեր, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: | իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմով: Էթիկայի հանձնաժողովները՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետ համագոր-ծակցությամբ հետևում են հանրային ծառայողների կողմից բարեվարքության պահանջների պահպանմանը: Բարեվարքության հարցերով կազմակերպիչների միջև համագոր-ծակցության խթանման նպատակով առնվազն տարեկան մեկ անգամ անց է կացվում փորձի փոխանակմանն ուղղված հանդիպում: |
| 12. | Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող ան-ձանց վարձատրության համակարգի բարեփոխում | Ուսումնասիրվել են պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման հիմնական ուղղությունները | Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղված միջոցառումներ են նախատեսվել ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությամբ | Իրականացվում են պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառումները | Նախատեսված միջոցառումների շրջանակներում ապահոված են անհրաժեշտ իրավակար-գավորումները |
| 13. | «Հանրային ծառայության մա-սին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառա-յողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վար-քագծի կանոնների սահմանում | | Միջազգային փորձն ուսումնասիրվելէ: Ուսումնա-սիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: | Մշակվել են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները | Ընդունվել են հանրային ծառայողի, քաղաքացիական ծառայողի վարքագծի տիպային կանոնները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 14. | Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում | Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնա-սիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկություն-ների փաթեթ | Մշակվել են պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները: | Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները ընդունվել և գործում են: | |
| 15. | Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում | | Վերանայվել են քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգերը՝ զրոյականացնելով քաղաքացիական ծառայողների ներգրավման գործընթացում քաղաքական ազդեցությունը | Սահմանվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման հստակ չափանիշներ | |
| 2.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մ<br>սական մրցակցության պաշտպանություն) | | | | | |
| | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | |
| | | 2019 թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
| 16. | Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետու-թյան բարձրացում | | Միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացվել է: Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության հստակ չափանիշների և շրջանակի վերաբերյալ առաջարկությունը ներկայացվել է ՀՀ Վարչապետի աշխատակազմ: | Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության հստակ չափանիշները և շրջանակը սահմանվել է: | Իրավական ակտերի նախագծերի, ընդունված իրավական ակտերի հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության պարբերական գնահատում |
| 17. | Գույքի, եկամուտ-ների և շահերի հայտարա-րագրման համակարգի կատարելագոր-ծում: Ծախսերի հայտարա-րագրման համակարգի ներդրում | Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնա-սիրությունների արդյունքում մշակվել | Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդունվել է: | Ընդունված կարգավորումների շարունակական կիրարկման ապահովում: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | և ներկայացվել է առաջար-կությունների փաթեթ: Ուսումնասիրության հիման վրա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: | Ընդլայնվել է հայտարարատուների շրջանակը՝ հայտարարատուների ցանկում, ի թիվս մի շարք այլ պաշտոնյաների, ներառելով նաև 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամներին և աշխատակազմերի քարտուղարներին, հանրային նշանակության կազմակեր-պություններում վարչական պաշտոն զբաղեցնող անձանց: Ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմ հասկացությունը: Վերանայվել է հայտարարագրման բովանդակությունը, ընդլայնվել են հրապարակման ենթակա տվյալները, իջեցվել է հայտարարագրման ենթակա թանկարժեք գույքի արժեքային շեմը, ներդրվել է փաստացի օգտագործվող գույքը հայտարարագրելու պահանջ, հստակեցվել են փոխառությունների և եկամուտների տեսակները, ներդրվել է ծախսերի հայտարարագրման համակարգ: Պետական պաշտոնի հավակնող և նման պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել է լիազոր մարմնին նոտարական կարգով աշխարհի ցանկացած բանկում և ֆինանսական կազմակերպությունում, ցանկացած երկրի տարածքում իրենց անունից փնտրել և ստանալ տեղեկություններ իրենց անունով հաշվեհամարների առկայության, ստեղծման օրից դրանց շարժի և մնացորդի, ինչպես նաև իրենց անունով շարժական, անշարժ գույքի և արժեթղթերի առկայության մասին տեղեկատվություն ստանալու լիազորագիր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տալու պարտականություն: | | |
| 18. | Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում | | Կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: | Ուսումնասիրության հիման վրա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել ՀՀ ազգային ժողով | Ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն հստակեցվել են Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, սահմանվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում այն հավատարմագրային կառավարման կարող են հանձնել բացառապես ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույցի: |
| 19. | Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում | Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտը վերլուծվել է, վեր են հանվել առկա խնդիրները, մշակվել դրանց կարգավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ: | Մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծ: Մշակվել է նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանք: | Նվերների ռեեստրը մշակվել և գործարկվում է: | |
| 20. | Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում | Ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորման, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման վերաբերյալ միջազգային փորձը: Վեր են հանվել Հայաստանում տվյալ ոլորտում առկա խնդիրները և ներդրման հեռանկարները: Մշակվել և Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին է ներկայացվել համապատասխան առաջարկությունների փաթեթ | | Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի փաթեթ: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 21. | Հանրային նշանակության կազմակեր-պությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիս-կերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թը-վում առկա կոռուպցիոն ռիս-կերի վեր-հանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում | | Ուսումնասիրվել են հանրային նշանակության կազմա-կերպությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրները Ուսումնասիրվել է հակակոռուպցիոն համապա-տասխանության վերաբերյալ միջազգային փորձը և առկա իրավիճակը Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հանրային նշանակության կազմակեր-պությունների ներկայացուցիչների հետ: | Հանրային նշանակության կազմակերպությունների կարգավիճակը հստակեցվել է և ներդրվել է կոռուպցիոն ռիսկերի նվազեցման արդյունավետ գործիքակազմ |
| 22. | Գործարար ոլոր-տում հակակոռուպցիոն համապա-տասխանության պահանջների ընդունման խթա-նում | Ուսումնասիրվել է մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապա-տասխանության վերաբերյալ միջազգային փորձը Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ: | Ներկայացվել են գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապա-տասխանության պահանջների ներդրման վերաբերյալ առաջարկություններ: | Մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերում: |
| 23. | Գնումների ոլորտի բարելավում | | Պետական գնումների համակարգի շարունակական կատարելագործման նպատակով իրականացվել է ոլորտային խնդիրների ուսումնասիրություն: Ուսումնասիրության հիման վրա մշակվել և | Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել է նախագծերի փաթեթ՝ ուղղված գնման գործընթացների պարզեցմանը, գնման գործընթացի որոշակիության ապահովմանը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկվել է պետական գնումների համակարգի շարունակական կատարելագործմանն ուղղված առաջարկությունների փաթեթը: | |
| 24. | Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում | | Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: Մշակվել է պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի գրանցամատյանի ծրագրային ապահովումը | Ճանապարհային քարտեզին համապատասխան` տարբեր ոլորտներում շարունակաբար ներդրվում է իրական սեփականատերերի բացահայտման պահանջ: |
| 25. | Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում | | Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրությունն ուսումնասիրվել է: Մշակվել է առկա խնդիրների կարգավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթ, այդ թվում` Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման մեխանիզմների կատարելագործման, հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման գործընթացում Հանձնաժողովին օպերատիվ տվյալների հասանելիության տրամադրման հնարավորության դիտարկում: | Առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր, ներկայացվել ՀՀ Վարչապետի աշխատակազմ: |

2.3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում, պետական կառավարման գործընթացին հ
ների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում)

| | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26. | Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդը-րում | Ուսումնասիրվել է տեխնիկական հնարավորությունը: Մշակվել և ՀՀ Վարչապետին է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: | | Վիճակագրական ճկուն գործիքների ներդրման արդյունքում ապահովված է գործադիր իշխանության մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը | |
| 27. | Իրավական ակ-տերի նախագծե-րի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնու-թյան ապահով-ման արդյունա-վետության բարձրացում | Կատարվել են www.e-draft.am հարթակի արդիականացմանն ուղղված աշխատանքներ | www.e-draft.am հարթակը ինտեգրված է մի շարք այլ էլեկտրոնային հարթակների հետ: Ջուգահեռաբար իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ: | Ապահովված է հասարակության լայն շերտերի կողմից պետության իրավաստեղծ գործընթացին մասնակցության հնարավորությունը: Ջուգահեռաբար իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ: | Ներդրված են վիճակագրական նոր գործիքներ, որոնք ապահովում են իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման բաց և թափանցիկ գործընթացը: Իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ: |
| 28. | Պետական և տեղական ինքնակառավար-ման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատ-չելի տեղեկատվու-թյուն ստանալու գործիքակազմի ներդրում | Ուսումնասիրվել է պետական մարմիններում քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների շրջանակը | Մշակվել են ծառայությունների մատուցման որակի բարելավմանն ուղղված առաջարկներ | Իրականացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառումներ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 29. | Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում | | Արդիականացվել է sso.am էլեկտրոնային համակարգը և ներդրվել e-gov.am հարթակի շրջանակներում: | Ներդրվել է պետական և համայնքային ծառայությունների միասնական շտեմարան, մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման հնարավորություն, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության միասնական համակարգ: | |
| 30. | «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում | | Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ներկայացվել է առաջարկությունների փաթեթ: | Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքը մշակված է: | Կատարվում է մոնիթորինգ տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի գործունեության վերաբերյալ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 31. | Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում | | Ազդարարման համակարգի գործունեության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների ներկայացում: | Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների ներկայացում և քննարկում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում: | Ներքին և արտաքին ազդարարման վիճակագրության վարման միասնական մեխանիզմի սահմանում: |

3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

| | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
| 32. | ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի հստակեցում | Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ սահմանելով կոռուպցիոն հանցագործությունների կողմնորոշիչ ցանկը: | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 33. | ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում | | Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: | Կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկի ներկայացման և ընդունման դեպքում մշակվել է համապատասխան իրավական ակտերի նախագծերի փաթեթ: | |
| 34. | Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում | Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան մշակված է: | | Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան ներառված է քրեական հետապնդման մարմինների վերապատրաստման ծրագրերում: | |
| 35. | Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում | Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը մշակված են: | | Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը հաստատված են: Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով: | |
| 36. | Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով | | Մշակված է ծրագրային ապահովումը և ծրագիրը ներդրված է | Իրավապահ մարմիններն ունեն էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 37. | Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղ-ծում | Միջազգային փորձն ուսումնասիրվել է: Ուսումնասի-րությունների արդյունքում մշակվել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ: | Առաջարկությունների փաթեթի հիման վրա ստեղծվել է բանկային հաշիվների կենտրոնական ռեեստր: | | |
| 38. | Կոռուպցիոն հանցագոր-ծությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագոր-ծակցության ամրապնդում | Ուսումնասիրվել են կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմները և դրանցում առկա խոչընդոտները | | ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման առկա խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ առաջարկներ: | |
| 39. | Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում | Ուսումնասիրվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և վերադարձման վերաբերյալ ՀՀ օրենսդրության կարգավորումները և դրանց համապա-տասխանությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի պահանջներին: Ուսումնասի-րությունների արդյունքների հիման վրա մշակվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն մասին» օրենքի նախագիծ: | «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: | Ստեղծվել և գործարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր: | |
| 40. | Կոռուպցիոն իրավախախտում-ների համար իրավաբանական անձանց քրեական պատա-սխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում | Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության միջազգային փորձն ուսումնասիրվել է: | | «Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ | «Քրեական օրենսգրքո լրացումներ կատարել դատավարության օրե փոփոխություններ և լ մասին» օրենքների նա են ՀՀ վարչապետի աշ րդ եռամսյակ)«Քրեակ փոփոխություններ և լ մասին» և «Քրեական օրենսգրքում փոփոխո |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակվել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել: | կատարելու մասին» օ<br>ներկայացվել են Ազգա<br>եռամսյակ) |
| 41. | «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրեն-<br>քի 30-րդ հոդվա-<br>ծով սահմանված իրավակար-<br>գավորումների և իրավակիրառ պրակտիկային համապա-<br>տասխանեցման նախադրյալների ստեղծում | Իրականացվել է համապատասխան ուսումնասիրություն: Ներկայացվել է առաջարկ առկա օրենսդրական անհամապատասխանությունների և դրանց վերացման առկա հնարավորությունների վերաբերյալ | | Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել օրենսդրական փաթեթ՝ ուղղված կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառումը նաև ապօրինի վարձատրություն տալու կամ ստանալու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու վերաբերյալ գործերով իրականացնելուն: | «Օպերատիվ-հետախու<br>մասին» ՀՀ օրենքի 30-<br>սահմանված իրավակ<br>իրավակիրառ պրակտ<br>հակասությունը վերա<br>փոփոխությունների փ<br>Ազգային ժողով (2022թ |
| 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | | | | **Վերստուգիչ ցուցանիշ**<br>Համաշխարհային բան<br>յին՝ 2017՝44.23, 2022թ<br>Կովկասյան բարոմետ<br>րենսի Ինթերնեշնլ, Կո<br>յին՝ 2018՝ 35, 2022թ.՝ |
| | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | | | Վերստու |
| | | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
| 42. | Հանրային իրազեկման տարեկան արշա-<br>վի ծրագրի մշա-<br>կում, հաստա-<br>տում և իրականացում | Հաղորդակցման ռազմավարությունն ու համապատասխան գործողությունների ծրագիրը մշակվել ու ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ | Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվում են: Կիսամյակային հաշվետվությունները՝ ըստ սահմանված կարգի ներկայացվել են: | Իրականացված հանրային իրազեկման արշավների հիման վրա անձինք պարբերաբար տեղեկացվում են պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ : | |
| 43. | «Հակակոռուպ-<br>ցիոն քաղաքակա- | Մշակվել են «Հակակոռուպցիոն | Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական | | «Հակակոռուպցիոն քաղաքականության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | նության հիմունք-ներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն-ների դասավանդման մոդուլներում | քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերը: | հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկա: | | հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերը մշակված են (2020թ.-ի 2-րդ եռամսյակ): «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերով իրականացվում է դասավանդում (2020թ.-ի 3-րդ եռամսյակ) Հիմքային՝ 0, 2022թ.՝ 1 |
| 44. | Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում | Ավագ դպրոցում ուսուցանվող «Հասարա-կագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ կատարվել է ուսումնասիրություն: Ներկայացվել է համապատասխան առաջարկությունների փաթեթ: | Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է: | | «Հասարակա-գիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացված է, առաջարկությունները ներկայացված են (2020թ.-ի 2-րդ եռամսյակ): «Հասարակա-գիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների ներգրավմամբ իրականացվում է դասավանդում (2020թ.-ի 3-րդ եռամսյակ) Հիմքային՝ 0, 2022թ.՝ 1 |
| 45. | Քաղաքացիա-կան ծառայու-թյան համակար-գում իրականաց-վող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածու-թյան բարձրացում, վերապատրաս-տումների իրականա-ցում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով | Մշակվել են իրազեկվածության բարձրացման ուղեցույցները, վերապատրաստման ծրագրերը: | Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ: | | Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում առկա են կոռուպցիայի կանխարգելման, «Մարդու իրավունքներ» թեմաներով դասընթացներ (2020թ.-ի 4-րդ եռամսյակ): 50 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են: |
| 46. | Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշա-կում | | Մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ | | Քաղաքացիական ծառայողների ուսուցումը կազմակերպվել է հեռավար ուսուցման մոդելի կիրառմամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 47. | Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում | | Մշակվել են թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման տեխնիկական պայմանները | Միասնականացվել թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը | Գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը |
| 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ | | | | | |
| | Միջոցառումը | | Ակնկալվող արդյունքը | | |
| | | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
| 48. | Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում, | Մշակվել է կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման մեթոդաբանություն: | Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: | | |

Հավելված N 3
ՀՀ կառավարության
2019 թվականի հոկտեմբերի 3-ի
N 1332-Ն որոշման